22 ՓԵՏՐՈՒԱՐ 1994 ԵՐԵՔՇԱԲԹԻ # 32 (535)

Azg
Azg
armenian daily



Հ. Չեթին. Մինսկի խումբն առայժմ չի կարող հավաքվել

ԱՆԿԱՐԱ, 18 ՓԵՏՐՎԱՐ, ՖՐԱՆՍ ՊՐԵՍ: Ղարաբաղի հակամարտության կարգավորմանն հարցով Մինսկի խումբը «չի կարող հավաքվել, քանի դեռ հայերն անվերադարձորեն հեռ չեն քաշվել» իրենց գրաված ադրբեջանական տարածքներից, ուրբաթ օրն Անկարայում հայտարարեց Թուրքիայի արտգործնախարար Հիմմեթ Չեթինը Մինսկի խմբի նախագահ Ցան Էլիասոնի հետ իր զրույցի սկզբում: «Անկարելի է զիջում անել այն հարցում, որ Ղարաբաղն ադրբեջանական տարածք է», շարունակեց Չեթինը: «Ադրբեջանական տարածքների 20 տոկոսը գրավված է հայերի կողմից, եւ խմբի որեւէ ժողով չի կարող կայանալ Ղարաբաղի քաղաքական ապագայի շուրջը, քանի դեռ այս խնդիրը կարգավորված չէ», ավելացրեց նա: Անկարան դեմ է այս հարցով Մոսկվայի միակողմանի նախաձեռնություններին, գտնելով, որ ամեն մի նախաձեռնություն պետք է առաջ քաշվի Մինսկի խմբի ներսում: ■

ԴՈՒՌՔԱՅԻՆ ՀԱՐԾ

Մոսկովյան հանդիպում, նոր հարցականներ

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, ԻՆՉՊԵՍ հայտնի է, փետրվարի 18-ին Մոսկվայում Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովի նախաձեռնությամբ տեղի ունեցավ Հայաստանի եւ Ադրբեջանի պաշտպանության նախարարների եւ ԼՂՀ պաշտպանության բանակի ներկայացուցչի հանդիպումը: Ընդ որում Պավել Գրաչովը հենց սկզբից հայտարարեց, թե թե հանդիպման ընթացքում որեւէ պայմանավորվածություն ձեռք չբերվի, ապա ինքը մտադիր չէ առաջիկայում շարունակել խաղաղարար միջնորդական ջանքերը:

Ադրբեջանական Թուրան գործակալության մեկնաբանության համաձայն, ամենայն հավանականությամբ հենց Ռուսաստանի նման կոչ դիրքորոշման պատճառով է, որ կողմերը որոշում են կայացրել հակամարտության գոտում կրակի դադարեցման վերաբերյալ՝ միաժամանակ հավանություն տալով այն մտքին, որ հակամարտությունը պետք է կարգավորվի մի քանի փուլերով: Ընդ որում Ռուսաստանի պաշտպանության նախարարությունից Թուրանին հաղորդել են, թե կարգավորման ռուսական ծրագիրը ենթադրում է կրակի դադարեցում, բոլոր գրավյալ տարածքներից զորքերի դուրս բերում եւ երկու կողմերից կազմի օտարերկրյա վարձկանների հետ ուղարկում: Ռուսաստանի պաշտպանության նախարարության ներկայացուցիչը հրաժարվել է բացել փակագծերը եւ մեկնաբանել, թե ինչ է նշանակում «բոլոր գրավյալ տարածքներ», եւ ինչպես պետք է վերահսկվի վարձկանների վերադարձը:

Ի դեպ, ցաքաք օրը բուրգական հեռուստատեսության առաջին ծրագրով երբեք է արձակվել մի տեղեկություն, համաձայն որի պաշտպանության նախարարների մոսկովյան հանդիպման ժամանակ Սերժ Սարգսյանը 10 օր ժամանակ է խնդրել՝ հայկական զորքերը բոլոր գրավյալ տարածքներից (Ղարաբաղից դուրս) հանելու համար, թեեւ ադրբեջանական կողմը պնդում էր, որ դա արվի 2 օրում: Իր հերթին Ֆրանսիայի գործակալությունը հաղորդում է, թե հանդիպման ընթացքում կողմերը համաձայնության են եկել նշել հրադադարի սկիզբը եւ տեւողությունը՝ քաղաքական ղեկավարության հետ խորհրդակցություններ անցկացնելուց հետո: Իսկ Պավել Գրաչովը հայտարարել է, թե Ռուսաստանը կշարունակի միջնորդական առաքելությունը միայն հրադադարի հաստատումից հետո: Ընդ որում ռուս նախարարը նշել է, թե այդ դեպքում անհրաժեշտ կլինի տարանջատել հակամարտող ուժերին եւ ազատել գրավյալ տարածքները: Ցավոք, Հայաստանի պաշտպանության նախարարության լրատվական ծառայությունից մեզ տեղեկացրեցին միայն, որ առայժմ մոսկովյան հանդիպման մասին ոչինչ չեն կարող հայտնել: Ինչեւէ:

Հանդիպման հիմնական արդյունքները առայժմ մնում են վարագույրի ետեւում, եւ հայտնի չէ նույնիսկ, թե կողմերը հրադադարի վերաբերյալ որեւէ կոնկրետ համաձայնության եկե՞լ են, եւ եթե այո՝ ապա վերաբերու՞մ է դա ղարաբաղյան ռազմաճակատներին: Ի դեպ, հետաքրքիր մի փաստ. ըստ միանգամայն հավաստի աղբյուրների, Մամեդռաֆի Մամեդովը եւ Պավել Գրաչովը անձնական բարեմիտներ են: Բանն այն է, որ քանի տարի առաջ գեներալ-մայոր Մամեդովը դատի է տվել Պավել Գրաչովին՝ իրեն ծառայությունից ազատելու համար, եւ նույնիսկ շահել դատը: Իհարկե, նման կարեւորության խնդիրներում անձնական համակրանքները որեւէ դեր չեն կարող ունենալ, եւ այնուամենայնիվ հանդիպումը հարցականներ է թողնում: Ո՞ՐՆ է վերջապես Ռուսաստանի դիրքորոշումը: ■

ԹԲԻԼԻՍԻ-ԵՐԵՎԱՆ

Հայաստանը պատրաստ է Վրաստանին վաճառել թուրքմենական գազը

Պացացիան վերադարձավ Թբիլիսի Շեւարդնաձեի հետ խորհրդակցելու

ՎԱՀԱՆ ԱՄԱՏՅԱՆ, ԵՐԵԿ պշխաստանցիային այցով Երեւան ժամանած Վրաստանի վարչապետ Օթար Պացացիան հանդիպումներ ունեցավ Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ վարչապետ Հրանտ Բագրատյանի հետ:

Մեզ հասած հավաստի տեղեկությունների համաձայն, բանակցությունների արդյունքում նախատեսվում էր ստորագրել մի համաձայնագիր, ըստ որի Հայաստանն իր գնած թուրքմենական գազի մի մասը պետք է վաճառեր Վրաստանին: Թվում էր, թե դրանով պետք է լուծվեր Վրաստանի տարածքով Հայաստան գազ բերելու խնդիրը: Սակայն, ինչպես ցույց տվեցին բանակցությունների արդյունքները, վրացական կողմը առայժմ հրաժարվեց որեւէ փաստաթուղթ ստորագրել եւ անգամ չշարունակելով կառավարությունում ծրագրված բանակցությունների երկրորդ փուլը. Օթար Պացացիան վերադարձավ Թբիլիսի: Վրաստանի ղեկավար Էդուարդ Շեւարդնաձեի հետ խորհրդակցելու եւ վերջնական որոշում ընդունելու:

«Զվարթնոց» օդանավակայանում պատասխանելով մեր հարցերին, վարչապետ Օթար Պացացիան նշեց, թե հիմնականում քննարկվեցին տնտեսական հարցեր, սակայն մնացին չլուծված խնդիրներ, որոնք դեռ պետք է վերամշակվեն:

«Անշուշտ, բոլոր հարցերը կլուծվեն, քանի որ մենք շաղկապված ենք տարբեր թելերով եւ պետք է գտնենք լավագույն լուծումը», ասաց պրն. Պացացիան: Մեր այն հարցին, թե ինչ որոշվեց Հայաստանի գազամատակարարման խնդրում, Օթար Պացացիան չթաքցնելով փաստը պետք է վերահսկվի գազամուղը. նա ասաց, թե պետք է իրականացվի գազամուղի համատեղ վերահսկում, մշակվում են մեխանիզմներ, որոնք գործի կդրվեն գազամուղի վերականգնումից հետո:

Թե ե՞րբ կլինի դա, Օթար Պացացիան նշեց, որ ժամանակավոր գծի սխեման կավարտվի 3 օրից, իսկ մագիստրալային սխեման՝ 2-3 ամսից: Վրաստանի վարչապետը խուսափեց երաշխիքներ տալուց, վստահ լինելով, որ խոստումներն այլեւս որեւէ արժեք չունեն:

Միեւնույն ժամանակ հավաստի աղբյուրներից մեզ հայտնի դարձավ, թե Վրաստանն իրոք զորք է դահանջում Հայաստանից: Բայց Հայաստանը, որն առանց այն էլ իրեն հասանելիք գազի հաշվին դահում է Վրաստանի բնակչությանը, փնտրում է այլ տարբերակներ: Տես էջ 2

ՏԱՐԱՌՈՏ

Եվրամիության օգնությունը անցյալ տարի՝ 57 մլն. դոլար

ԲՐՅՈՒՍԵԼ, 18 ՓԵՏՐՎԱՐ, ՌԻԱ ՆՈՎՈՍՏԻ: 1993 թ. նախկին ԽՍՀՄ հանրապետությունները եվրոպական միությունից բեռների ձեւով ստացել են 51,3 մլն. էկյու գումարի մարդասիրական օգնություն (57 մլն. դոլար), հաղորդվում է եվրոպական միավորումների հանձնաժողովի այստեղ տարածված զեկուցագրում: Այդ գումարի 2/3-ը հատկացվել է Անդրկովկասյան հանրապետություններին եւ առաջին հերթին Լեռնային Ղարաբաղում ու Վրաստանում ռազմական գործողություններից տուժած 2 մլն. գաղթականներին: Օգնության մնացած մասը տրամադրվել է Տաջիկստանին, Ռուսաստանին, Ուկրաինային եւ Կրգզստանին: Անմիջականորեն Ռուսաստանը եվրոպական միությունից ստացել է 4,8 մլն. էկյու գումարի մարդասիրական օգնություն, այդ թվում դեղորայք եւ պարեն:

Կուբայի հետ առեւտրի արգելքը կդադարեցվի

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 21 ՓԵՏՐՎԱՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ պետքարտուղար Ռոբերտ Քրիստոֆերը մերժեց Քլինթոնի վարչակազմի կողմից Կուբայի հետ առեւտուր կատարելու արգելքի վերացման հնարավորությունը, ինչպես դա ավելի վաղ արվել էր Վիետնամի նկատմամբ: Կիրակի օրը ABC հեռուստաընկերության հարցազրույցի ժամանակ նրան հարցրին. «Հիմա, երբ մենք կարծես թե կարգավորում ենք հարաբերությունները Վիետնամի հետ, ի՞նչ կարելի է ասել Կուբայի առնչությամբ»: «Մենք կարծում ենք, պատասխանեց Քրիստոֆերը, որ դրանք միանգամայն տարբեր իրավիճակներ են: Վիետնամի կառավարությունը փորձում է որոշակի առաջընթաց արձանագրել գոնե տնտեսական ոլորտում: Կուբայի նկատմամբ մենք շարունակում ենք գործել այդ երկրում ժողովրդավարությանն աջակցելու օրենքին համապատասխան, որը 1992 թ. հվեների մեծամասնությամբ ընդունվեց կոնգրեսում եւ նախատեսում է խնդրի նկատմամբ ուշիշ մոտեցում»:

ՎԱՇԻՆԳՏՈՆ

Քրիստոֆեր. «Բոսնիայի խնդիրը չի կարող լուծվել ճակատամարտում»

Կարաջիչ. «Օդային հարվածների համար պատճառ չկա»

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 21 ՓԵՏՐՎԱՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Բոսնիայի խնդիրը չի կարող լուծվել ճակատամարտում», այս համոզմունքն արտահայտեց ԱՄՆ պետքարտուղար Ռոբերտ Քրիստոֆերը: «Ես կարծում եմ, նշեց նա կիրակի օրը ABC հեռուստաընկերությանը տված հարցազրույցում, որ հարկավոր է գտնել կողմերին մերձեցնելու որեւէ ուղի»:

«Ներկայումս, նշեց պետքարտուղարը, մենք փորձում են դարձել, թե ինչպիսի խելամիտ դահանջներ են առաջադրում մահմեդականները, եւ օգնել դրանց բավարարմանը: Նախագահ Քլինթոնը ինձ ցուցում է տվել առավել եռանդուն դեր խաղալ բանակցություններում»:

Անդրադառնալով Բոսնիայի իրադրության կարգավորմանն ուղղված Ռուսաստանի դիվանագիտական վերջին նախաձեռնություններին, Քրիստոֆերն ասաց. «Ես չեմ ուզում բերազնահատել այնտեղ Ռուսաստանի արածի կարեւորությունը, բայց դա արվեց ի դատապարտանք ԱՄՆ-ի խնդրանքի: Ինձ թվում է, որ ՆԱՏՕ-ի դերի ակտիվացման եւ հաստատուն դիրքորոշման դատճառով ռուսները որոշել են, որ իրենք պետք է միջամտեն, եւ մենք ողջունում ենք նրանց օգնությունը»:

«Օդային հարվածներ հասցնելու համար որեւէ դատճառ չկա», ABC հեռուստաընկերությանը տված հարցազրույցում իր հերթին հայտարարեց բոսնիացի սերբերի ղեկավար Ռադովան Կարաջիչը: «Մենք Սարաեւոյից արդեն հեռացրել ենք մեր տրանսպորտային միջոցների զգալի մասը, նշեց նա, մնացած մասը հավաքվում է եւ կհանձնվի ՄԱԿ-ի ուժերի վերահսկողությանը»: Պատասխանելով այն հարցին, թե գո՞հ է արդյոք ինքը, որ ռուսաստանցի զինծառայողները եկել են Սարաեւոյի շրջան, Կարաջիչը մասնավորապես նշեց. «ՆԱՏՕ-ն օդային հարվածներ հասցնելու որեւէ դատճառ չունի, անկախ ռուսների ներկայությունից: Մենք սերբերս, ՆԱՏՕ-ի համար որեւէ դժվարություն չենք ստեղծել եւ շաս ուրախ ենք, որ ռուսները եկել են: Ի դեպ, Ամերիկայի հետ նույնպես մենք շաս լավ դաշնակիցներ ենք եղել»: Կարաջիչի կարծիքով, ՆԱՏՕ-ն «կարիք չուներ դիմելու սդառնալիքների, քանի որ Սարաեւոյի շուկայի ահաբեկչական քայլը կազմակերպել էին մահմեդականները: Իսկ ՄԱԿ-ը կարիք չուներ ընդունելու հակասերբական եւս մեկ բանաձեւ»: «Երբ մեզ վրա հարձակվեն, մենք օրինական իրավունք կունենանք դատասխանելու», ընդգծեց բոսնիացի սերբերի ղեկավարը: Երբ հաղորդավարը հարցրեց, թե արդյոք մա նկատի ունի ՆԱՏՕ-ի ինքնաթիռների գնդակոծումը, Կարաջիչը դատասխանեց. «Չգիտեմ, թե դրանք ում ինքնաթիռներ կարող են լինել: Բայց եթե դրանք հարվածեն մեզ եւ սպանեն մեր մարդկանց, այդ դեպքում, իհարկե, մենք ստիպված կլինենք դատասխանել»: Տես նաեւ էջ 8

ՂԱԲԱԲԱՂ

Դեղի Մատաղիս գրոհները կասեցվում են

ՎԱՀԵՐ ԱՂԱՅԱՆՅԱՆ, ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 21 ՓԵՏՐՎԱՐ: Այսօր վաղ առավոտյան Լեռնային Ղարաբաղի ռազմաճակատներում մոտ երկու օր տեւած հարաբերական անդորրը կրկին խախտվեց: ԼՂՀ դատաշտանության բանակի շտաբից հաղորդում են, թե մոտ ժամը 7-ին Մարտակերտի շրջանի հյուսիսային տարածքներում տեղաբաշխված ադրբեջանական կազմավորումները ուժգին հրետանային նախադատրաստությունից հետո հերթական անգամ փորձել են լայնածավալ գրոհ ձեռնարկել Մատաղիս գյուղի ուղղությամբ: Ժամը 18.30-ի դրությամբ, մարտերը ռազմաճակատի այս հատվածում շարունակվում էին: Ղարաբաղյան ուժերին հաջողվում է կասեցնել բշնամու բոլոր գրոհները: Միաժամանակ այսօր, օրվա երկրորդ կեսին ականանետերից հրետակոծվել են Թիգուլու շրջանի դատաշտանական դիրքերը: Ավելի վաղ՝ փետրվարի 19-ի երեկոյան եւ լույս 20-ի գիշերը, մարտերն ընթանում էին Քելբաջարի շրջանի հյուսիսում, որտեղ շրջադատման մեջ հայտնված 800 ադրբեջանցի զինվորները փորձում էին ճեղքել ղարաբաղյան ուժերի օղակը եւ նահանջել դեղի Խանլարի շրջան: Միաժամանակ, ադրբեջանական բանակի հրամանատարությունը Օմարի լեռնանցքի ուղղությամբ քարշ ուժեր էր ուղարկում, փորձելով օգնության հասնել շրջադատման մեջ հայտնված կազմավորումներին: Ղարաբաղյան ուժերը, հուժկու հակագրոհի անցնելով, ոչնչացրել են բշնամու դիմադրության բոլոր օջախները: Մի քանի տասնյակ ադրբեջանցի զինվորներ գերի են հանձնվել, իսկ մնացածներն ոչնչացվել են: Հաջորդ օրերին ռազմաճակատի այս հատվածում ռազմական լուրջ գործողություններ չեն արձանագրվել: ■

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ԹԲԻԼԻՍԻ-ԵՐԵՎԱՆ

Հայաստանը դատապարտ է ...

Սկիզբը էջ 1

Փաստորեն Վրաստանը, որն ի վիճակի չէ Թուրքմենստանից գազ գնել, դեռևս է սառած լինի բանակցությունների մեջ մտնել Հայաստանի հետ: Եւ այդ դարաձաներում, եթե նորից կրկնվեն դայթակղությունները, Հայաստանն իրավասու կլինի ընդհանրապես անջատել Վրաստան մտնող գազի հոսքը:

Ընդ որում, առաջարկող տարբերակներից մեկն էլ այն էր, որ եթե այդ դայմաններում գազամուղը դայթեցվի, Վրաստանը դեռևս է փոխհատուցի մազութով կամ էլեկտրաէներգիայով, որն իհարկե նա չունի:

Այդ դատճառով էլ, վրացական կողմը, խիստ էմոցիոնալ նման առաջարկը, հրաժարվեց ստորագրել Փաստորեն, եթե դատճառական Թբիլիսին չընդունի Հայաստանի դահանջները, կարող է ակնկալել համադատասխան այլ քայլեր, որոնք կարող են ծանրացնել այլուղված տնտեսությամբ Վրաստանի վիճակը: Հայաստանն առաջին լինում է իր հաղթության բաժակը:

ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄ

Տեր-Պետրոսյանն ընդունեց դիվանագետներին

Փետրվարի [illegible] ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն ընդունեց Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական կորդուսի ներկայացուցիչներին Ռուսաստանի արտակարգ եւ լիազոր դեսդան Վլադիմիր Ստուդիհինին, ԱՄՆ-ի արտակարգ եւ լիազոր դեսդան Հարի Գիլմորին, Չեխոսլովակիայի արտակարգ եւ լիազոր դեսդան Ֆրանս դը Հարբինգին, ՉՀՀ-ի արտակարգ եւ լիազոր դեսդան Չժան Սիդիին, Իրանի Իսլամական Հանրադետության դեսդան Նասրոլլա Խոշրոսդանին, Բուլղարիայի գործերի ժամանակավոր հավատարմատար Անդրեյ Ֆուլդ Ռասլանին, ՊՀՀ-ի գործերի հավատարմատարի դատասխանատար Բարբարա Բեկին, Հունաստանի գործերի ժամանակավոր հավատարմատար Ալիքի Հաքիին եւ ՄՎԿ-ի Երեւանի դրասենյակի դատասխանատու Բիմ Ուդասին, երեկ տեղեկացրեց ՀՀ նախագահի մամուլի ծառայությունը:

Լեւոն Տեր-Պետրոսյանը օտարերկրյա դիվանագետներին ներկայացրեց Վրաստանում ստեղծված էներգետիկ ճգնաժամի դատճառով այդ երկրի տարածքով դեպի Հայաստան բեռնափոխադրումների իրականացման գործում ծագած խնդիրները եւ դրանց լուծման հնարավոր ուղիները:

Հանդիպման վերջում ՀՀ նախագահը դատասխանեց դիվանագետներին հետաքրքրող, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի խնդրի շուրջ ստեղծված կացությանը եւ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին վերաբերող հարցերին: Հանդիպմանը ներկա էին ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը, արտաքին գործերի նախարար Վահան Փափազյանը:

Սիրիացի արդյունաբերողները Հայաստանում

ԵՐԵՎԱՆ, 21 ՓԵՏՐՎԱՐ, ՄՆԱՐՔ: Այսօր Հայաստանի արդյունաբերության նախարար Ատոս Սաֆարյանն ընդունեց Սիրիայի Արաբական Հանրադետության դատասխանական դատվիրակությանը, որը Երեւան էր ժամանել երեկ ուշ երեկոյան: Դատվիրակությունը գլխավորում է Սիրիայի արդյունաբերության նախարար Ամեդ Նիզամ ադ-Դինը: Ինչդես հայտնեցին հանրադետության արդյունաբերության նախարարությունում, սիրիացի արդյունաբերողները Հայաստանում կմնան 6 օր եւ կայցելեն մի շարք խոշոր ձեռնարկություններ եւ գիտական կենտրոններ: Այցի ծրագրով նախատեսված են հանդիպումներ Հայաստանի վարչադետի եւ դրիշ դեկավարների հետ: ■

Սեփականաշնորհումը հայ գյուղում բազում նոր խնդիրներ երեւակեց: Հաղորդագրությունները դատասխանատու՞են էր դատճառը, օրենսդրական դաշտի անկատարությո՞ւնը, թե տեղական գործադիր իշխանությունների բուռությունը, դեռ դեռ մամուլում սկսեցին հայտնվել տեղեկություններ ու փաստեր գյուղում սեփականաշնորհման գործընթացում տեղ գտած բացթողումների, օրինախախտումների, կառավարական որոշումների իրականացման հարցում անհետեւողականության մասին: Ահա այդդիսի նամակ էլ ստացավ «Ազգի» խմբագրությունը, որի հեղինակները (դատ ստորագրությունների 6 հոգի) բերի միջնորդությունն էին խնդրում Արարատի երջանի Ջրաբեռ գյուղի կոլտնտեսականների իրավունքները վերականգնելու համար, որոնք ոտնահարվել էին սեփականաշնորհման գործընթացում:

Նամակում նշվում է, որ Ջրաբերում սեփականաշնորհում սկսելուց առաջ տեղի չի ունեցել կոլտնտեսականների կամ համայնքի անդամների ժողով, դարզորոշ չեն բացատրվել սեփականաշնորհման օրենքները, այն կատարվել է հարցեղորեն, առանձնորոշելով բնակչությանը, հատկապես անասունների սեփականաշնորհման հարցում:

Ըստ ՀՀ գյուղացիական եւ գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին օրենքի 8-դ հոդվածի, կոլտնտեսականների 2/3-ը գրավոր համաձայնություն դեռևս է տար ֆերմայի իրրեւ կոլեկտիվ սեփականություն մնալու համար, մինչդեռ, ինչդես ասվեց, ընդհանուր ժողով առհասարակ տեղի չի ունեցել:

Այնուհետեւ նշվում է, որ սեփականաշնորհման ընթացքում հաշվի չեն առնվել որոշ կոլտնտեսականների գրավոր դիմումները: 5-ական գլուխ խոշոր եղջերավոր անասուններ վերցնելու վերաբերյալ, դրանք մերժվել են: Ֆերման տրվել է գյուղի աշխատանքների հետ կապ չունեցող անձնավորությանը:

Բողոքավորները բազմիցս դիմել են վերադաս մարմիններին եւ իրրեւ դատասխան ստացել են օրենքի կոդից խախտում հավաստումը: Նամակի հետ խմբագրությանն է ուղարկվել նաեւ ՀՀ կառավարության համադատասխան որոշումը (թիվ 379, 04.05.92 թ.) այն ժամանակ փոխվարչադետ Հ. Բագրատյանի ստորագրությամբ, որի մեջ նշվում է, որ ՀՀ կառավարության ագրարային ռեֆորմի եւ սեփականաշնորհման կենտրոնական դետական ծրագրի նախագահության նիստով որոշում է ընդունվել սեփականաշնորհել Ջրաբեռ գյուղի անասնագլխաքանակը ու մյուս հիմնական միջոցները: Կառավարական գրությամբ հանձնարարվել էր Ջրաբեռ գյուղի սեփականաշնորհման հանձնաժողովին իրագործել նշված որոշումները իսկ ծագող գույքային վեճերը հանման հարցերը լուծել դատարանի միջոցով: Սակայն, ինչդես ցույց է տալիս նամակը, նույնիսկ կառավարական որոշումը անգոր է գտնվել Արարատի երջանի Ջրաբեռ գյուղի գործադիր կոմիտեի դիմաց, կամ գուցե տեղական գործկոմն է անգոր եղել հետեւել կառավարական հանձնարարականին, թե՞ «անդատժելիության վիրուսն» է տարածում գտել այս տեղերում, անհայտ է առայժմ: Իսկ հայտնին փաստորեն (ըստ նամակի) այն է, որ կառավարական որոշումը տուսով մեկ տարի է, ինչ մնում է ... արհամարհվա՞ծ:

Ս. Մ.

ԵՐԵՎԱՆ

Հանրահավաք հանրահավաքի համա՞ր

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ. Փետրվարի 20-ին Ազատության հրապարակում «Արցախ-Հայաստան» կազմակերդությունը հրավիրել էր հանրահավաք նվիրված դարաբաղյան շարժման վեցերորդ տարելիցին: Տարելիցը տարելից, սակայն հանրահավաքը ենթադրում է, որ դեռևս է նաեւ ինչ-որ ասելիք լինի. իսկ այս անգամ դա չկար: Այսինքն՝ չկար նաեւ բազմահազարանոց ժողովուրդը, ու թեեւ հարթակից տեսակետ հնչեց, թե հանրահավաքին մասնակցում է 10-20 հազար մարդ, այնուամենայնիվ իրականում մարդկանց թիվը չէր անցնում 3 հազարից: Սոսկալի ցուրտ էր, եւ երեւի դա նույնդես ազդեց հանրահավաքի մասնակիցների թվի վրա. մանավանդ որ հանրահավաքի սկիզբը փոքրիկ մի միջադեդի դատճառով մոտ կես ժամ հետաձգվեց. բանն այն է, որ բացելով հանրահավաքը դրոֆեսոր Մերգեյ Մելքումյանը մասնակիցներին թվարկելիս չնշեց ԱԻՄ-ի անունը, եւ ամիսականներն իրենց ենագույն դրոշներով հանդերձ հեռացան հանրահավաքից կինում է, չէ՞, երբ հարսանիքի ժամանակ բամբասանք մոռանում է խմել ճեռիներից մեկի կենացը, եւ վերջինս ցուցադրական կերդով հեռանում է սեղանից՝ սառը ջուր լցնելով մնացածների գլխին: Ինչեւէ: Միջադեդը հարթվեց, եւ ամիսականները վերադարձան:

Իսկ հանրահավաքի կարգախոսները հետեւյալն էին. «Ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրադետությունը», «Արցախյան գոյամարտը հայ ժողովդի գոյատեւման անկյունաքարն է» եւ այլն: Ընդհանուր առմամբ ելույթ ունեցողները շեշտում էին արցախյան գոյամարտին առավելագույնս սատար կանգնելու անհրաժեշտությունը, իշխանություններին հրաժարականի դատահանջը եւ այլն՝ չմոռանալով նախատես համառոտակի ներկայացնել անցած 6 տարիների ժամանակագրությունը: Մի խոսքով, հանրահավաք հանրահավաքի համար: «Այս ամենը ծիծաղելի կլիներ, եթե չլիներ այդքան տխուր»: ■

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ՅԱԽ

Մի խումբ երիտասարդ ձեռներեցներ աջակցություն կցուցաբերեն ցախ գնելու հարցում:

Գինը՝ 1 խմ 3400 դրամ

Ցախը կտրատված է, երկարությունը 40 սմ-ից ոչ մեծ:

Հեռ. 22-81-63

ՏԱԿԵՐԾ

Կառավարությունը բարձրացրել է հացահատիկի մթերման գները

Բնակչությունից հացահատիկի գնումը խրախուսելու նպատակով փետրվարի 19-ից ՀՀ կառավարությունը սահմանել է դետական գնումների հետեւյալ սանդղակները (գինը մեկ տոննայի համար). դարեցային ցորեն՝ 12 հազ. դրամ, հաճար՝ 9 հազ. դրամ, գարի՝ 7,5 հազ. դրամ: Սերմացու հացահատիկի համար սահմանվում է 30 տոկոս հավելավճար, գարեջրի գարու համար՝ 20 տոկոս: Նշված սա կագները տարածում են նաեւ հացահատիկի եւ սերմացուի բնակչությունից արդեն ընդունված, բայց դեռ չվճարված հանակի վրա:

ԱՊՀ երկրների դարտքը Ռուսաստանին 3,5 տրիլիոն ռուբլի

ՍՈՍԿՎԱ, 18 ՓԵՏՐՎԱՐ, ՈՒՍՍՆԱՐՔ: 1993 թ. վերջերին ադրանքների մատակարարումների դիմաց Ռուսաստանին ԱՊՀ երկրների ձեռնարկությունների ու կազմակերդությունների ընդհանուր դարտքը կազմել է մոտ 3,5 տրիլիոն ռուբլի: Ըստ որում, 1,5 տրիլիոնը ընկնում է Ռուսաստանի վառելիաէներգետիկ համալիրի ձեռնարկություններին: Այդ մասին հայտնեցին Ռուսաստանի վիճակագրական վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն, կրճատվում են նաեւ նախկին միութենական հանրադետությունների փոխադարձ ադրանքաբերության ծավալները: Այսդես, 1993 թ. փոխադարձ մատակարարումների ծավալները կազմել են 1991 թ. մակարդակի մոտ 50 տոկոսը: Նույն ժամանակամիջոցում Ռուսաստանից ԱՊՀ դետություններին գազի մատակարարումը կրճատվել է 8, ածխինը՝ 68, ավտոմոբիլային բենզինինը՝ 60, մետաղի գլանվածինը՝ 64 տոկոսով:

Վրաստանի հայկական ընկերության համագումարը

ԹԲԻԼԻՍԻ, 19 ՓԵՏՐՎԱՐ, ՄՆԱՐՔ: Այսօր Թբիլիսիում աշխատանքն սկսեց Վրաստանի հայկական մշակութային-բարեգործական ընկերության երկրորդ համագումարը: Համաժողովի մասնակիցներին ողջույնի ուղերձով դիմել է էդուարդ Շեւարդնաձեն: Ուղերձում հույս է հայտնվում, որ համագումարը կծառայի վրացի եւ հայ ժողովուրդների դարավոր բարեկամության հետագա ամրադնդմանը: ■

ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔ

Հայաստանում դահիճներ չկան

ԼՈՆԴՈՆ, 21 ՓԵՏՐՎԱՐ, ՄՆԱՐՔ: Հայաստանի բանտերում խորհրդային ժամանակներից գտնվում են յոթ մահադարտներ, որոնց մահավճիռները ի կատար չեն ածվում Հայաստանում դահիճների բացակայության դատճառով, հաղորդել է «Էմնիստի ինտերնեշնլ» միջազգային իրավադաշտան կազմակերդության հանդեսի փետրվարյան համարը: Խորհրդային ժամանակաշրջանում մահադարտյալներ Հայաստանում մահավճիռներ չեն կայացվել, յոթ «վետերան» մահադարտներն իրենց ճակատագրին սդասում են արդեն չորս տարի: Այդ ժամանակամիջոցում մահադարտներից մեկն ստանվել է իր խցակցի նույնդես մահադարտի կողմից, որից հետո մյուսներին տեղավորեցին մենախցերում: Այսդիսով, դահիճների եւ մահադատժի համար անհրաժեշտ սարքավորումների բացակայությունը Հայաստանում հանգեցնում է մարդասիրական նորմերի խախտման, եզրակացնում է հանդեսը, որն սկզբում հորեն դեմ է մահադատժին:

Ա. Մանուչարյանն արդեն Երեւանում է

Կիրակի երեկոյան Մոսկվայից Երեւան վերադարձավ Ատոմ Մանուչարյանը: ՀՀ նախագահի ազգային անվտանգության գծով նախկին խորհրդականը «Զվարթնոց» օդանավակայանում նստեց նույն իմքնաթիռով ժամանած ՀՀ նյութական ռեսուրսների նախարար Վահան Մելիքյանին սդասակող մեքենան եւ նրա հետ մեկնեց քաղաք: Նույն օրդ Մոսկվայից Երեւան վերադարձավ նաեւ ՀՀ նախագահի եւս մեկ նախկին խորհրդական՝ Վահան Շիրխանյանը: Ըստ լուրերի, վերջինս երեւ Մոսկվայում հանդիդումներ են ունեցել ռուսական զանազան գերատեսչությունների դեկավարների եւ քաղաքական գործիչների հետ: ■

Օգնել ուսանողներին եւ ծերերին

ԵՐԵՎԱՆ, 18 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Երեւանի 170-դ դդրոցի ուսուցչուհի հանգուցյալ Գայանե Մանուկյանի հիշատակին էր նվիրված ամուսնու՝ երվանդ Մելքոնյանի նախաձեռնությամբ երկու տարի առաջ ստեղծված Գայանե Մանուկյան-Մելքոնյան կրթական հիմնադրամը (ներկայումս երվանդ Մելքոնյանը Լիբանանում ՀՅ դեսդանի դատասխանատու է):

Հիմնադրամի տնօրեն Սերգեյ Հարությունյանը հայտնեց, որ նդատակ ունենալով օգնել հանգուցյալ տիկնոջ դդրոցի ուսման մեջ առավել այրի ընկած աշակերտներին իրենց հետագա ուսումը շարունակելու գործում, այսօր այն ամսական 50-ական դրամ բոնակ է հատկացնում դդրոցն ավարտած, Երեւանի բուհերում սովորող 7 ուսանողների: Փոքր-ինչ ընդարձակելով բարեգործության շրջանակները, հիմնադրամը կի լիկիո կաթողիկոսության ԱՄՆ Արեւելյան շրջանի ու Կանադայի ազգային առաջնորդարանի միջոցներով օգնում է նաեւ Երեւանի մոտ 3000 միայնակ ծեր բոնակառուների (68 եւ ավելի բարձր տարիքի) եւ տուրջ 700 զոհված ազատամարտիկների ընտանիքների, համադատասխանաբար նրանց հատկացնելով ամսական 100 եւ 400-ական դրամ նդատաս: «Դժբախտաբար մեր միջոցները տուդ են, եւ այսօր շատերին օգնելու հնարավորություն դեռ չունենք», հայտնեց Ս. Հարությունյանը: ■

ՈՒՍՈՒՑԻՉ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ՕՐՍՅԵՐԻՆ

Դասատվության դ տարի

Դիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, տելեքս 243266 CPIR SU

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841

Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863

Ոճը եւ տառատեսակը ՊՈՒՇԿԻՆ ԴԱԼԼԱՊԵՏՅԱՆ

Apple Macintosh համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի

Azg armenian daily

LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Published in U.S.A. by AZG Publishing Co., 22122 Sherman Way, Suite 203, Canoga Park, CA 91303, Call (818) 598-0423 Fax: (818)340-9819 for subscription rates.

Publisher - Հրատարակիչ
Dr. Krikor Krikorian -
Դոկտ. Գրիգոր Գրիգորեան

Executive Director - Տնօրէն
Vartan Karaoghlanian -
Վարդան Գարաղոյանեան

Production Manager -
Raffi Shoubookian
Արտադրութիւն
Ռաֆֆի Շուտուխեան

«ԱԶԳ» օրաթերթը հարդարված է ԱՄՆ «ԱՐՄԻՆՖՈ» ՍՊԸ-ի համակարգչային կարդով
Հեռախոս 7-8852 281425,
Ֆաքս 7-8852 285082

E-MAIL INTERNET: ROOT. YEREVAN @ REX. IASNET. COM

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՇՐՋԱՆ, ԱՊԱՀ

Սախ այն մասին, թե ինչ չափանիշներով է որոշվում զարգացող ոլեսության կարգավիճակը:

Ամենից առաջ նկատի է առնվում բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ազգային արտադրանքի արտադրությունը: Հաշվի են առնվում բնակչության գրագիտությունը, կյանքի միջին տևողությունը: Այստեղ կարևոր գնահատիչ ցուցանիշ է ազգային հասվածի տեսակարար կշիռը, որն զգալի դեր է խաղում համախառն ազգային արտադրանքի գոյացման մեջ և այլն...

Վրաստանի սոցիալ-տնտեսական լրատվության կոմիտեի փոխնախագահ, տնտեսագիտության թեկնածու Իոսիֆ Արշվաձեի կարծիքով («Սաֆարվելոս ռեսպուբլիկա» թերթ), Վրաստանը դասական բնորոշմամբ այնքան էլ տիպիկ օրինակ չէ այդ կարգի ոլեսությունների համար: Օրինակ, հանրապետությունում առկա է ոչնչացման օրենք 100 տարեկանց գրագիտություն: Համաշխարհային ազգային արտադրանքի ավելի քան երկու երրորդն արտադրվում է արդյունաբերության ճյուղերում և սպասարկումների ոլորտում, կյանքի միջին տևողությունը հասնում է 70 տարվա, մինչդեռ «դասական» զարգացող ոլեսություններում այն տատանվում է 55-ից մինչև 64 տարվա միջև: Բայց գլխավոր հարցում՝ բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ազգային արտադրանքի արտադրության գծով, Վրաստանն զգալիորեն հետ է մնում զարգացող երկրներից, ինչը ըստ էության գլխավոր փաստարկը դարձավ Վրաստանի, որպես զարգացող ոլեսության, կարգավիճակը սահմանելիս:

Վրաստանի վիճակագրության վարչությունում մեզ տրամադրված տվյալները վկայում են, որ, իհարկե, գոյություն ունեն ևս մի շարք ցուցանիշներ, որոնց համաձայն Վրաստանի վիճակը մոտիկ է զարգացող երկրների վիճակին: Այսպես, բարձր զարգացած երկրներում սպառվող էներգիայի մեկ կիլովատի հաշվով արտադրվում է մինչև 6 դոլլարի համախառն ազգային արտադրանք: Վրաստանում այդ թիվը կազմում է երկու դոլլարից պակաս, ինչպես որ ըստ էության զարգացող երկրների մեծ մասում: Վրաստանում բույլ է ազգային արժույթը: Առկա են արտաքին պարտքի արագ աճի նշաններ: Աղեսալի կերպով աճում է գործազուրկների թիվը: Պաշտոնական տվյալների համաձայն, նրանք կազմում են մինչև 200 հազար մարդ, իսկ չգրանցված գործազուրկներին հաշվի առնելու դեպքում՝ 400-450 հազար: Վրաստանի բնակիչների մեծ մասը վաղուց ունի աղքատության նշագծից ցածր կենսամակարդակ: Մարդիկ պարզապես քաղցում են: Օրինակ, վերջին երեք տարում հանրապետությունում բնակչության մեկ շնչի հաշվով կալորիաների սպառումը կրճատվել է 25-30 տոկոսով և ներկայումս կազմում է Թուրքիայի մակարդակի ընդամենը երկու երրորդը: ԱՄՆ-ի բանտերում մեկ շնչի հաշվով կալորիաների օրական սպառման նորման կազմում է 3000, մինչդեռ Վրաստանի յուրաքանչյուր բնակչի նորման միջին հաշվով կազմում է 2000 կալորիա:

Սակայն հանրապետությունում կան նաև այնպիսի կարգի մարդիկ, որոնք չեն քաղցում: Քաղաքական և տնտեսական անկայունությունը բարելով հասակ ֆինանսավարկային քաղաքականություն: Ըստ որում, պետք է միջոցներ ձեռնարկվեն հարկերի վճարման վերահսկողությունը խստացնելու նպատակով: Այս բնագավառում Վրաստանում լիակատար կամայականություն է տիրում: Եկամուտները համատարած կերպով թաքցվում են: Հետո էլ ոմանք զարմանում են, թե որտեղից ու ինչպես է բարգավաճում սվերային տնտեսությունը, որը տնտեսագիտական ընկերակցություն, որոնք ապրանք են արտադրում կամ ծառայություններ մատուցում, հրաժարվելով հարկերի վճարումներից: Ճիշտ է, «տուրֆ» վճարում են, բայց ոչ պետությանը: Հանրապետությունում բոնատորության հետ են կապված թե հարգված առեւտրականը, եւ թե ամենաբշավան մուրացկանը: Ի դեպ, սվերային տնտեսությունը նույնպես զարգացող երկրների անկապտելի հատկանիշն է: Բայց պատկերը լրացնելու համար այստեղ հարկավոր է ավելացնել նաև ասիճանավորների կաբառակերությունը:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍ

Վրաստանը զարգացող երկիր է

ՌՈՉԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Եթե մեկ-երկու տարի առաջ դեռ Վրաստանի հասարակության մեջ զայրույթի բռնկում կառաջացներ, առավել այժմ բնակչության մեծ մասն այս լուրն ընդունեց անտարբեր, իսկ շատերը չթաքցրին ուրախությունը, ենթադրելով, թե դա կդյուրացնի կյանքը, երկրին թույլ կտա հաղորդակցվել «առավել բարեկեցիկ դարձնող ռեժիմին»: Եվ նրանք շատ բաներում իրավացի են: Դա ունի իր անվիճելի դրական կողմերը: Պատահական չէ, որ նման կարգավիճակի հաջողվում է հասնել բնավ էլ ոչ բոլոր երկրներին, որոնք նույնիսկ հիմնականում համաղասախոսում են դրա համար անհրաժեշտ պայմաններին: Բավական է ասել, որ նախկին Խորհրդային Միության բոլոր հանրապետություններից նման «ընտրվի» հաջողվել է արժանանալ միայն Վրաստանին, թեև ուրիշ գանկագողներ էլ կային: Դարձյալ է. Վրաստանն ինչպե՞ս առավելագույն օգուտ քաղի սրանից, այդ կարգավիճակի առավելությունները չդարձնի միայն նեղ շրջանակի անձանց սեփականություն, որոնք շիվում են տարաբնույթ արտահանական-ներմուծական, արժութային եւ այլ գործառնությունների հետ, ինչպե՞ս հասնի այն բանին, որ դրա ազդեցությունը նախ եւ առաջ օգնի բնակչության միջին կենսամակարդակի բարձրացմանը:

ման համար: Վրաստանն այժմ գրեթե ոչինչ չի արտադրում, փոխարենը ծաղկում են սպեկուլյացիան, կաբառակերությունը, ելուզակությունը: Ստեղծվում են վիթխարի հարստություններ:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ հանրապետությունում բնակչության 10 տոկոսի եկամուտները 10-12 անգամ գերազանցում են բնակչության ամենաաղքատ մասի եկամուտները: Այս առումով, Վրաստանը մոտենում է ԱՄՆ-ի մակարդակին (Իոսիֆ Արշվաձե), որտեղ այդ թիվը կազմում է 13 տոկոս: Բայց բնակչության այդ 10 տոկոսից 2-3 տոկոսը կազմում են մեծահարուստները, իսկ միլիոնները, ինչպես հայտնի է, ազնիվ ճանապարհով չեն դիզվում: Տարբեր գնահատումների համաձայն, բնակչության ձեռին կան 100-200 դոլլար եւ մինչև 300 միլիարդ ռուսական ռուբլի: Այդ դրամագլուխը քարացած է: Փորձագետների գնահատումների համաձայն, այն կարող էր գործել ի բարորություն Վրաստանի, եթե ծախսվեր ներքին փոխառության պարտատոմսերի եւ ուազմավարական կարեւոր 2-3 ուղղություններ զարգացման վրա: Սակայն դա հնարավոր է լոկ այն դեպքում, եթե պետությունը վայելում է բնակչության վստահությունը: Ցավոք, նման վստահություն չկա: Եվ որտեղի՞ց լինի, եթե հենց պետությունն է խարխլել ամեն մի վստահություն իր դրամանիշի կուրորեն հանդեպ:

Կարծիքներ կան, թե ցանկության դեպքում կարելի է շտկել գործը, վերցնելով հասակ ֆինանսավարկային քաղաքականություն: Ըստ որում, պետք է միջոցներ ձեռնարկվեն հարկերի վճարման վերահսկողությունը խստացնելու նպատակով: Այս բնագավառում Վրաստանում լիակատար կամայականություն է տիրում: Եկամուտները համատարած կերպով թաքցվում են: Հետո էլ ոմանք զարմանում են, թե որտեղից եւ ինչպես է բարգավաճում սվերային տնտեսությունը, որը տնտեսագիտական ընկերակցություն, որոնք ապրանք են արտադրում կամ ծառայություններ մատուցում, հրաժարվելով հարկերի վճարումներից: Ճիշտ է, «տուրֆ» վճարում են, բայց ոչ պետությանը: Հանրապետությունում բոնատորության հետ են կապված թե հարգված առեւտրականը, եւ թե ամենաբշավան մուրացկանը: Ի դեպ, սվերային տնտեսությունը նույնպես զարգացող երկրների անկապտելի հատկանիշն է: Բայց պատկերը լրացնելու համար այստեղ հարկավոր է ավելացնել նաև ասիճանավորների կաբառակերությունը:

Բնական հարց է ծագում. այնուամենայնիվ ինչպիսի՞ առավելություններ կամ օգուտներ է խոստանում զարգացող երկրի կարգավիճակը: Նախ եւ առաջ, դա տնտեսական օգնությունն է: Նման դեպքերում (Վրաստանի համար) օգնության գումարը կազմում է համախառն ներքին արտադրանքի 20-80 տոկոսը, այսինքն 1-4 միլիարդ դոլլար: Փորձագետները գտնում են, որ հնարավոր կլինի վարկեր վերցնել եւ դրանք արդյունավետորեն օգտագործել: Ի հարկե, չարժե դրանով հրապուրվել, չէ որ դա պարտքով է տրվում, իսկ պարտքերը վաղ թե ուշ հարկ կլինի վերադարձնել: Զարգացող պետության պայմաններում շատ կարեւոր է, որ ստեղծվում է մասնագետների կադրերի ուսուցման, դրանց վերապատրաստման հնարավորություն: Տարրական գրագիտություն ամենքն ունեն, բայց իսկական պրոֆեսիոնալներն առայժմ Վրաստանում անբավարար են:

ՏԱԿԻՐՄԱ

Թենգիզ Սիգուան մեղադրում է ազգային բանկի ղեկավարությանը

ԹԲԻԼԻՍԻ, 19 ՓԵՏՐՎԱՐ, ՍՆԱՐՔ: Այսօր Վրաստանի ազգային բանկի ղեկավարությանը ֆինանսական մեքենայությունների մեջ մեղադրեց երկրի նախկին վարչապետ Թենգիզ Սիգուան: Նա հայտարարեց, որ անցյալ տարվա գարնանը ազգային բանկի նախագահը չեխոսլովակյան մի ֆիրմայի հետ պայմանագիր էր կնքել Վրաստանին 32 միլիոն ռուբլու ոսկեղենի մատակարարման շուրջը: Սիգուայի խոսքերով, հետագայում պարզվել է, որ ստացված «ոսկերչական աղբի» արժեքը 20 անգամ պակաս է: Այսպիսով, նախկին վարչապետի կարծիքով, ազգային բանկի ղեկավարությունը պարզապես փորձել է փողերը գնդխադրել Չեխոսլովակիա:

Ռուսաստանը պետք է դառնա բոլորի հայրենիքը

ՄՈՍԿՎԱ, 19 ՓԵՏՐՎԱՐ, ՍՆԱՐՔ ՌԻԱ: Ռուսաստանի Դաշնության տարածքում առանձին պետությունների գոյացումը փաստորեն անիրական է, այսօր Ռուսաստանի նախագահին առընթեր հասարակական պալատի նիստի կողմատահներում հայտարարեց Ռուսաստանի լիբերալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդ, Պետդումայում այդ կուսակցության խմբակցության ղեկավար ՎլադիմիրԺիրինովսկին: Տարածքների մասնատումը, ընդգծեց նա, բնավ ձեռնտու չէ Ռուսաստանի ժողովուրդներին տնտեսական ու ռազմական տեսակետներից, ինչպես նաեւ հանցագործությունների դեմ մղվող պայքարի առումով: Վ Ժիրինովսկու կարծիքով, «Ռուսաստանը պետությունների բաժանելու գործընթացը վերջացել է: Դա հնարավոր էր 30 տարի առաջ: Ռուսաստանի ճակատագիրն այնպիսին է, որ ներ կայումն շահում է միասնական տարբերակը»: «Ռուսաստանը պետք է դառնա բոլորի հայրենիքը», ընդգծեց ՌԼԴԿ-ի ղեկավարը:

Սեւաստոպոլում բնակելի տներին լույս է տրվելու օրական ընդամենը 4 ժամ

ՍԻՄՖԵՐՈՊՈԼ, 19 ՓԵՏՐՎԱՐ, ՌԻԱ ՍՆԱՐՔ: Կիրակի օրվանից Սեւաստոպոլում էլեկտրաէներգիայի սպառման տարակարգ ռեժիմ է մտցվում: Բնակարաններին լույսը մատակարարվելու է օրական 4 ժամ: Այդ խիստ միջոցառման պատճառը Սեւաստոպոլի ջերմաէլեկտրակենտրոնի համար վառելանյութ գնելու միջոցների պակասն է: Կիեւից առայժմ ոչ մի ֆինանսական աջակցություն չի նախատեսվում: Մինչդեռ բնակտնտ գործունեության համար խաղաղի Սեւծովյան նավատորմի խարսխակայանին օրական 5 միլիարդ կարբովանեց է անհրաժեշտ:

Ադրբեջանի եւ Դաղստանի լեզգիները մտահոգ են

ԲԱԿՈՒ, 18 ՓԵՏՐՎԱՐ, ԹՈՒՐԱՆ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ադրբեջանի եւ Դաղստանի լեզգիները լրջորեն մտահոգված են Ռուսաստանի սահմանապահ զորքերի գլխավոր շտաբի պետի տեղակալ, գեներալ մայոր Ալեքսեյ Բարանովի վերջերս արած այն հայտարարությունից, որ հարկավոր է ռուս-ադրբեջանական սահմանին տալ պետական սահմանի կարգավիճակ, հայտարարեց լեզգիների ազգային խորհրդի նախագահ Նարիման Ռամազանովը:

ՄԵՎ ՕՐՎԱ ՇՐՋԱՆ

Մեկովը փորձում է միավորել Ղրիմի քաղաքական ուժերը

ՍԻՄՖԵՐՈՊՈԼ, 19 ՓԵՏՐՎԱՐ, ՌԻԱ ՍՆԱՐՔ: Ղրիմի նախագահ Յուրի Մեկովն առաջին քայլը կատարեց միավորելու քաղաքական ուժերն ու հասնելու ազգային համաձայնության: Նա խորհրդավորության հրավիրեց բեռակղզում պատշաճորեն գրանցված բոլոր կուսակցությունների ղեկավարներին: Հանդիպումների մասնակիցները նշում են դրանց կառուցողական բնույթը, նրանց հասկանալու նախագահի ձգտումը: Ովքեր այդ հայացքներ ունեն Ղրիմի առաջայի նկատմամբ, կազմել են տնտեսական դժվարությունները հաղթահարելու իրենց ծրագիրը: Մեկովը Ղրիմի կուսակցությունների ղեկավարներին առաջարկեց բեկնածություններ առաջադրել այն թափուր տեղերի համար, որոնք բացվում են պետական կառուցվածքներում: Իրենց հերթին նրա զրուցակիցները հայտարարեցին, որ պատրաստ են նպաստել տնտեսական բարեփոխումների նախագահական ծրագրի իրականացմանը:

Կուսակցությունների եւ հասարակական կազմակերպությունների հետ կապերի գծով նախագահի խորհրդական Սերգեյ Նիկուլինն այն կարծիքին է, որ հասարակական ուժերի համախմբումը հնարավորություն կտա նոր խորհրդարանին կազմել մեծաթիվ պատգամավորական դաշինք որը կդաշնանի Մեկովի ուղեգիծը: Բացի այդ էլ, Ղրիմի ներկայիս նախագահի գլխավորած «Ռոսիա» դաշինքը պատգամավորության իր թեկնածուներին է առաջադրել բոլոր ընտրատեղամասերում եւ մատիր է հուժկու համաբարժում կազմակերպել ի պաշտպանություն նրանց, նշեց Նիկուլինը:

Միշա Սնեգուրը Մոլդովայի հիմնախնդիրների մասին

ՔԻՇՆԵՎ, 21 ՓԵՏՐՎԱՐ, ՍՆԱՐՔ ՌԻԱ: «Մոլդովայի Հանրապետությունը կստորագրի ԱՊՀ տնտեսական բնույթի փաստաթղթերը, քանի որ նախկին կապերի խարխլումը բացասաբար է ազդում հանրապետության բնակչության կենսամակարդակի վրա եւ հանգեցնում է խրախիճակի աղքատացման», հայտարարել է հանրապետության նախագահ Միշա Սնեգուրը Համբուրգի հեռատեսությամբ կայացած հարցազրույցի ժամանակ: Ինչպես հաղորդել է նախագահի մամլո ծառայությունը, մեկնաբանելով հանրապետության արեւելյան շրջանների հակամարտությունը, Մ. Սնեգուրն ուշադրություն է դարձրել Ճ. հանգամանքի վրա, որոնք կարող էին հանգեցնել նրա կարգավորմանը: Խոսքը նախեւառաջ այն ազդեցության մասին է, որը Ռուսաստանը կարող էր ունենալ ինքնահռչակ Մեծդնեստրյան Հանրապետության իշխանությունների վրա: Մոլդովայի նախագահի կարծիքով, մյուսներն «Տիրապոլի ղեկավարների հետաքրքրված չկայացած քաղաքականության հետեւանքների հետ այդ տարածաշրջանի բնակչության չհաշվելու ցանկությունն է» եւ հանրապետության նոր խորհրդարանի ընտրությունը չը կարող էր դինել խնդրահարց փոքրիկ ջրամբարների Մեծդնեստրին հատուկ կարգավիճակ տրամադրելու հարցում:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հրատարակում

Կամ ոչինչ չեն հասկանում բիզնեսից, կամ շատ-շատ են հասկանում: Այսպես բնորոշեց օտարերկրյա փորձագետներից մեկը երեւույթի հերոսներին, որոնք առնչվեցինք ակամա, մի դրական լուրի հետեւանքով: Իսկ դրա էությունն այն է, որ էներգետիկ ճգնաժամի, հումքի սովի պայմաններում մի կերպ գոյատեւող շրջափակված Հայաստանից արտահանվում են հասցոներ, մեքենաներ, սարքավորումներ, պահեստամասեր, փոխարենը սենդամքերք ներմուծելու պայմանով, որոնք հիմնականում, գործառնություն: Ինձ չեմ վերապահում դատավոր լինել, դա լրագրողի դերը չէ: Ուզածիկ ուզում եմ, որ բոլորս, հասկացնես նրանք, ովքեր գործի բերումով, թե ի պաշտոնե մոտ են կանգնած նման գործառնություններին, մի քանի հարց տան իրենց, ասենք, խղճի, առաքինության, ազնվության, հայրենասիրության մասին: Փորձեն պարզել, թե այդ ո՞ր անհրաժեշտությունն է ստիպում հասցոներ ու սարքավորում արտահանել Հայաստանից «բարեբային» անվանված խղճուկ գնով, առա աղասել կես տարի, որ ինֆլյացիան կոնֆետ, շոկոլադ, պանիր, ձեր...

Հարցիս, թե ինչո՞ւ էին շարունակում նման խայտառակ համագործակցությունը իր պարտավորությունները չկատարող գործընկերոջ հետ, «Արմենիեն Ակբրնի» վարչության նախագահ Վազգեն Հակոբյանը պատասխանում է, որ ուրիշ ոչինչ չէր մնում անել, շարունակում էին հույսով, որ մթերքն ի վերջո կներմուծվի: Բացի այդ, կար նաեւ մի հանգամանք Դրո Գույումճյանի եղբոր Հակոբ Գույումճյանի խոսքումը նավթ ներկրել Հայաստան (նրան նույնիսկ լիազորագիր էր տրվել տամ իրեն: Ի դեպ, հավատացի, բայց երբ փորձի համար բարգմանչին խնդրեցի մեկնել դրանցից մեկի բանվանդակությունը, պարզվեց որ Դրո Գույումճյանը ոչ թե Հայաստանն է ներկայացնում գրեթե ամբողջ Մերձավոր Արեւելքում, ինչպես ինքն էր ասում, այլ Հայաստանի որոշ ձեռնարկություններ, որոնց թիվը մեկ այլ փաստաթղթով 12 է, իր խոսքով 22:

Վերջում տեսնելով, որ իր հորդորնախազգուշացումներն անհետեւանք են մնում, խնդրում է հետաձգել հրապարակումը մինչեւ թերի

Այս տարվա հունվարի 18-ին «Ազգի» մեջ «Բիզնես» խորագրի ներքո մի հրապարակում էինք զետեղել «Նյութական շահն էլ տեղ ունի, բայց...» վերնագրով: «Գինդ» տեղեկագրից վերցնելով առաջին իսկ պահած հասցեն եւ հեռախոսը, փորձել էինք գույց տալ, թե ինչով են զբաղված մեր համատեղ ձեռնարկությունները, նրանց գործունեությունը որեւէ շահ բերո՞ւմ է Հայաստանին, հայ ժողովրդին, որո՞նք են մեր համատեղ ձեռնարկությունների առջեւ ներկայումս ծառացած հիմնական հարցերը: Այս առնչությամբ «Ազգի» արտահասիֆային թղթակիցը հանդիպել էր «Արմենիեն Ակբրն» հայ-սիրիական համատեղ ձեռնարկության սիրիական կողմի ներկայացուցիչ Դրո (Հովհաննես) Գույումճյանին, լսել նրա պատմածը, ծանոթացել առվածը հավատացող գունազարդ պլակատների, գովազդային բացիկների, ինչ-ինչ փաստաթղթերի եւ դրա հետեւանքով հրապարակման ներկայացրել մի շատ սովորական, հերոսին դրական լույսի տակ գույց տվող տեղեկատվական բնույթի հոդված: Հոդվածում մասնավորապես բերվում էր սիրիական կողմից Հայաստան ներկրած սենդամքերքի տեսակներն ու քանակը, այլ պարամետրեր: Այս եւ հիմնականում սիրիական կողմին դրականապես ներկայացնելու փաստի պատճառով ընդվզել էր «Արմենիեն Ակբրնի» հայկական կողմը, որը բողոք-նամակով եւ իրենց ասելիքը հիմնավորող փաստաթղթերի տրցակով եկել էին խմբագրություն, պահանջելով եւս մեկ անգամ անդրադառնալ նշված համատեղ ձեռնարկության սիրիական կողմի եւ Դրո Գույումճյանի գործունեությանը, այս անգամ արդեն անհրաժեշտ հեռեւություններն անելով խմբագրությանը տրամադրված փաստերից: Քիչ առաջ ընկնելով փաստերի բուն շարադրանքից, ասեմ, որ դրանք նոսխ, առնվազն զարմանահարույց էին, պարզ իրոք, ընդվզում, բողոք առաջացնող, քանի որ խոսքը Հայաստանի (ամբողջությամբ եւ ձեռնարկությունների մասնավորապես) շահի անկնայս ոտնահարման մասին էր: Այդ էին մատնանշում փաստերը, շրջաբերելով իրենց մեղավորությունը, այդ էր հավատում բողոքող կողմը, որի միակ նպատակը այս դեպքում «դրական» հոդվածի հերոսների «բարեգործությանը» մերկացնելն էր, թույլ չտալը, որ հայաստանաբնակ այլ կազմակերպություններ եւ ձեռնարկիչներ ընկնեն հմտորեն լարված որոգայթը: Մանրակրկիտ ուսումնասիրեցի փաստերը: Հանդիպեցի, լսեցի երկու կողմին էլ: Արդյունքը ներքոբարդրյալ հոդվածն է, որը ներկայացնում եմ ձեր ուշադրությանը:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Հասցոյի դիմաց անձեռոցի՞կ է պետք Հայաստանին

այդպես էլ չեն ներմուծվում: Չմոռանամ նշել, որ հաճախ համաբխարհային շուկայի գներին մեր անտեղյակությունը սպիտում է փոխանակվող ապրանքների գների հարցում ընդունել խաղի այն կանոններ, որն առաջարկում է արտասահմանյան կողմը:

Եւ այստեղ, էժան հասցոյի դիմաց հանդիպակաց կողմը պարտավորվում է էժան մթերք առաքել Հայաստան, որն այդքան անհրաժեշտ է մեզ: Հասցոներն ու սարքավորումներն այս կողմից առաքվում են, իսկ սենդամքերքի հիմնական զանգվածը ճանապարհի փակ լինելու կամ այլ (ամենատարբեր) պատճառաբանություններով՝ ոչ:

Հայաստանի հոգսով տառապող արտասահմանյան կողմը, մոռանալով տրանսպորտի այլ տեսակների մասին, մտաղահելով միայն երկաթուղայինը, սկզբում հիմնվելով ճանապարհների փակ լինելու վրա, խնդրում է երկարաձգել իր պարտավորությունների կատարման ժամկետը, առա, ըստ երեւույթին, տուգանային սանկցիաների վտանգի առաջ բերում եւ փակում է իր պարտքերը ոչ թե ապրանքով (ինչպես որ պարտավորվել էր պայմանագրով), այլ փողով, եւ ընդ որում, ոչ թե կայուն վայլյուսայով (ինչով որ գնահատվել էին հասցոները), այլ իր պարտավորությանը համարժեք ժամ ամ ժամ արժեզրկվող խորհրդային ռուբլիներով, այն էլ առանց պարտադիր համաձայնությունը հարցնելու: Ինքնըստինքյան հասկանալի է, որ այդ փողերով հնարավոր չէ գնել ապրանքների այն քանակը (խոսքը մթերքի մասին է), որը նշված է ապրանքափոխանակման պայմանագրի մեջ, քանի որ ապրանքափոխանակման գործարքից դուրս այդ մթերքների գները բարձր են «բարեբային» գներից:

Կասեք, բայց չէ՞ որ չկա կրիմինալը: Լավ: Իսկ երբ նման ձեւով են «աշխատում» միեւնույն գործընկերների միջեւ կնքված, ասենք 3-4 պայմանագիր, այդ դեպքում ինչպե՞ս բացատրել սա, ի՞նչ մեկնաբանություն տալ: Պատահականությո՞ւն տիսա զուգադիպությո՞ւն, թե՞ խամսածված, պլանավորված մի քանի անգամ արժեզրկի փողը (դիտելով նաեւ հենց նույն ամերիկյան դոլլարին), եւ վերջում իբրեւ պարտավորությունների կատարում «ընդունել» խորհրդային ռուբլիները՝ աշխարհի վեցերորդ մասը կազմող երբեմնի տերության ապրը:

Ահա թե ինչու եմ պարտքս համարում հրապարակել այս «ղիտղված» գործող անձանց անունները: Ըստ ձեռքիս տակ գտնվող պայմանագրերի, հայկական կողմը ներկայացնում է «Արմենիեն Ակբրն» համատեղ ձեռնարկությունը (վարչության նախագահ Վազգեն Հակոբյան), արտասահմանյանը՝ սիրիական «Էլ-Արաբի» եւ «Կոհանս» ֆիրմաները (տնօրենները՝ Նեռնս եւ Հովհաննես (Դրո) Գույումճյաններ): Ըստ այդ նույն փաստաթղթերի վերջին երկու տարվա (1992-1993 թթ.) ընթացքում Հայաստանից Սիրիա է արտահանվել 370247 ԱՄՆ դոլլար գումարային արժողությամբ սարքավորում, հասցոյ, ագրեգատ, մեքենա, պահեստամասեր: Արտահանվածի դիմաց սիրիական կողմը ներմուծել է ընդամենը 152648 ԱՄՆ դոլլարի ապրանքներ, եւ ըստ «Արմենիեն Ակբրնի» ներկայացրած փաստաթղթի, 01.01.94 թ. դրությամբ պարտք է մնացել 217599 դոլլար:

Ներմուծված ապրանքների թվում են՝ 37400 դոլլար արժողությամբ հացաթխման վառարաններ, ձեթը (74250 դոլլարի), նավթավառները, պոլիէթիլենե փաթեթները, բոլոր անձեռոցիկները ու տպագրական թուղթը (13325 դոլլարի), «Մերսեդես» մեքենայի սիրիական մասնավոր արտադրության խլացուցիչներ, որոնք ցայսօր «Արմենիեն Ակբրնի» պահեստներում են, անորակության պատճառով չեն իրացվում, Բելգիայից 10 տոննա ընդհանուր քաշով հին կոշկեղենը եւ հագուստը, որոնց մի մասը նվիրատվությամբ բաժանվել է հիվանդանոցներին ու ծերանոցներին չվաճառվելու պատճառով, իսկ մնացածն էլ դարձյալ համատեղ ձեռնարկության պահեստներում է:

Այնինչ, պետք է գար 140 տոննա շաքարավազ, 8 տոննա արմավ, 130900 դոլլար գումարային արժեքով ձիթապտղի ձեթ, կարագ, սուրճ, փոխվարչապետ Վիգեն Չիտեչյանի կողմից Քուվեյթում բանակցություններ վարելու, Հայաստանը ներկայացնելու համար), խնդիրն այդ կենսականորեն կարեւոր գործին չխանգարելն էր, որն ավաղ, մյուս խոսքերի պես մնաց թղթի վրա:

Բայց չէ՞ որ ուղղակի վիրավորական է Հայաստանի համար այս դժվարին ժամանակահատվածում (եւ առհասարակ), երբ նոր ճանապարհներ են սովորում, ոչ թե միայն, այլ ուղղակի տեսի տեղ դնել հայկական կողմին, եւ ոչ միայն «Արմենիեն Ակբրնի» ղեկավարությանը:

Զարմանալին, երբ չասենք զավեշտականը շարունակվում է նաեւ այնտեղ, երբ խմբագրություն գալով Դրո Գույումճյանը փորձում է մի քանի գունազարդ պլակատով ու գովազդային պատկերներով առաջացնել իր... Ոչ-ոչ, նա բարեբար չէ, ինչպես ինքն է ասում՝ բիզնեսի մեջ ի՞նչ բարեբարություն, իսկ որ բարեգործ է, դա վստահեցնում է, բեռ ինքն էլ հասակ չի պատկերացնում թե ինչ տարբերություն կա դրանց միջեւ: Կտրականապես դեմ լինելով ծայնագրիչ միացնելուն, նա մի քանի անգամ «ուղղում» է իր ասածը, երբ տեսնում է, որ գրչով է գրանցվում իր արտաբերված ամեն բառը: Խորհուրդ է տալիս (որը նախազգուշացման պես է հնչում) առայժմ բառաց-իրեն ոչ մի բան չգրել խնդրո առարկայի կառակցությամբ, ընդգծելով սկզբում, որ դա «դասական», առա փոխելով՝ «ինեական» գործ է: Մեղադրում է հանդիպակաց կողմին ժոռնալիսթին այնպիսի տեղեկություններ տրամադրելու մեջ, որոնք ենթակա չեն հրապարակման: Ինքն այդ տեղեկությունները ոչ հերքում է, ոչ էլ հաստատում, այլ սոսկ «առայժմ ոչ մի ասելիք չունեմ, մինչեւ մեր դասական աշխատանքները չվերջանան»: Այնուհետեւ հրամցնում է փաստաթղթերի մի տրցակ եւ տեսնելով, որ դրանցից առաջին իսկ պատահածը ուշադրության եմ արժանացնում (արեւն, մի բան հասկանում եմ), հավատում է, պահանջելով, որ լոկ կնիքներ գնեմ, իսկ փաստաթղթերի պարունակության հարցում անվերապահորեն հավատամ իրեն: Ի դեպ, հավատացի, բայց երբ փորձի համար բարգմանչին խնդրեցի մեկնել դրանցից մեկի բովանդակությունը, պարզվեց որ Դրո Գույումճյանը ոչ թե Հայաստանն է ներկայացնում գրեթե ամբողջ Մերձավոր Արեւելքում, ինչպես ինքն էր ասում, այլ Հայաստանի որոշ ձեռնարկություններ, որոնց թիվը մեկ այլ փաստաթղթով 12 է, իր խոսքով 22:

Վերջում տեսնելով, որ իր հորդորնախազգուշացումներն անհետեւանք են մնում, խնդրում է հետաձգել հրապարակումը մինչեւ թերի

ՓԱՐԻԶ

Հայաստանցիներն անբարեհույսների շարքում

Ֆրանսիայի ներքին գործոց նախարարության փետրվարի 13-ի հրապարակմամբ Հայաստանի Հանրապետության հյուպատոսները 12 ուրիշ երկրների խաղաղաշունչների պես Ֆրանսիայի համար հայտնվում են «անբարեհույսների» ցուցակում: Մենք արդեն գրել էինք սրա մասին: Բայց ահա նաեւ Փարիզի մեր թղթակցի նյութը:

«Օտարահպատակների Ֆրանսիա մուտք գործելու եւ այստեղ բնակվելու կամ աշխատելու» վերաբերյալ ընդունված «Պասկուայի օրենքը», որը հրապարակվել էր 1993 թ. ամռանը «Journal office»-ում, դեկտեմբերին հարատեւ եւս մի պարբերությամբ:

Այսպիսով, երբ որոշ երկրների հպատակություն ունեցող օտարականներ, որոնք արդեն բավական մեծ դժվարություններով թույլտվություն էին ստացել Ֆրանսիա մուտք գործելու կամ այստեղ աշխատելու, հիմա էլ նույն երկրների հպատակները, այս անգամ Ֆրանսիայից դուրս գալու համար հատուկ արտոնության ենթակա պետք լինեն: Հունվարի 27-ին ընդունված, փետրվարի 13-ին կատարված հայտարարության համաձայն, այս անձինք Ֆրանսիայից նույնիսկ մեկ օրով դուրս գալու համար պարտավոր են պրեֆեկտուրաներից ելքի այցագիր ստանալ: Ֆրանսիա մտնելու եւ այնտեղից դուրս գալու համար մուտքի եւ ելքի այցագիր պարտավոր են ստանալ աֆղանստանցիները, հայաստանցիները, ադրբեջանցիները, հյուսիսկորեացիները, վրաստանցիները, իրաքցիները, իրանցիները, հորդանանցիները, լիբիացիները, սիրիացիները, սուդանցիները, եմենցիները:

Պետնախարար, ներքին գործերի, հանրային առողջության եւ կրոնական հարցերի նախարար Շարլ Պասկուայի ստորագրությամբ վերջին ավելացումներով, վերոհիշյալ երկրները հիշվում են որպես «զգուշավոր լինելու պարտավոր փափուկ երկրներ»: Ինչպես ցույց տվեցինք, որ 1986-88 թթ. կառավարությունը կազմող RPR-UDF-ի անդամ նախարարները նույնպես ընդունել էին ելքի այցագրի օրենքը այն անգամ այլ երկրների հպատակների համար, ինչը 6 տարի հետո Պետական խորհրդի կողմից չեղյալ էր համարվել:

1994 թ. նոր որոշման առթիվ Մարդկային իրավանց պաշտպանության լիգայի պատվո նախագահ, Ֆրանսիացի իրավաբան Իվ Ժուֆան, իր անհամաձայնությունը հայտնելով Ֆրանսիական հեռուստակայաններից, ասաց. «Իմ մտահոգությունն այն է, թե Ֆրանսիական տարբեր տեսությունների պաշտոնյաներից ոմանք այս դիմումի գործողությունը պիտի մեկնաբանեն որպես թույլտվություն: Իսկ եթե դրա անունը թույլտվություն պիտի լինի, դա հակասում է գնալ-գալու ազատության սկզբունքին: Քանի որ Ֆրանսիայում բնակության իրավունք ունեցող անձը երկրից դուրս գալու համար շաբաթ-շաբաթ իշխանություններին կարող է տեղյակ պահել, այլ ոչ թե արտոնություն խնդրել»:

Պասկուայի օրենքը կսկսի գործել ապրիլի 1-ից, քանի որ դեռ չի հրապարակվել օրենքի կիրառման հրամանագիրը: Նույն առիթով Ֆրանսահայ փաստաբանների եւ իրավաբանների AFAJA ասոցիացիան բողոք հայտարարություն է հղել կառավարության տարբեր անդամներին եւ մամուլին: Հայտարարությունում ասվում է, թե ասոցիացիան մեծ զարմանքով է ընդունում ներքին գործոց նախարարության հունվարի 27-ին ընդունած, փետրվարի 13-ին հրապարակած որոշումը, ըստ որի հայկական իրավասության տակ գտնվող անձինք 1994 թ. ապրիլի 1-ից Ֆրանսիայից դուրս գալու դեպքում են թեթեւ ելքի այցագիր ստանալու պարտավորության:

Ադրբեջանի հանդեպ ԼՂՀ ընդդիմադիր կեցվածքը կոնֆլիկտի պատշաճ ընդունելով, Ֆրանսիայի հայությունը դիտվում է որպես հարց, Ֆրանսիական հողատարածքի վրա անիշխանության դեմ պայքարի շրջանակի մեջ:

AFAJA-ն հարց է բարձրացնում այս անընդունելի եւ անկառակից մատնացուցման դիմաց, որը բացարձակապես արգելված է թե սահմանադրական խորհրդի եւ թե պետական խորհրդի կողմից: AFAJA-ն եւ Ֆրանսիայի 400 հազարանոց հայությունը կմնան ալարուշ, մինչեւ երբեւեկի ազատությանը հակասող այս օրենքի կիրառումը վերջ գտնի:

Բ. Հ. Ա.

---

digitised by A.R.A.R.@

ԱՇԽ. Միջազգային

Ճնայած միջազգային ասոյարեգում դրսեւորած բվացող ակտիվությանը, ներկայումս դաշտոնական Թուրքիան առավել՝ մսահոգված է ներքաղաքական անցքերով: Մարտի 27-ին նշանակված տեղական ընտրություններն օրեցօր ավելի են բորբոքում կրքերը: Թե իշխանություններին, եւ թե մտավորականության լայն խավերին խիստ անհանգստացնում է իսլամական արմատականության ցա-

ՄՈՒՐՔԻԱ

Տեղական ընտրությունների նախաշեմին

տագով Բարեկեցության կուսակցության աճող հեղինակությունը:

Նման անհանգստության համար բոլոր հիմքերը կան: Ըստ «Հյուրրիյեթ» թերթի երկրի 25 իլերում (նահանգներ՝ անցկացրած հարցման արդյունքների, ընտրողների մոտ 26 տոկոսը «Ո՞ւմ կայիք ձեր ձայնը, եթե այսօր խորհրդարանային ընտրություններ անցկացվեին» հարցին դասախսանել է՝ Մայր հայրենիք կուսակցությանը, ինչը վկայում է հանգուցյալ Օզալի կուսակցության դիրքերի ամրապնդման մասին: Հասարակության աչքերում խիստ հեղինակազրկվել է ներկա վարչապետ Թ. Չիլլերի գլխավորած Ճամբարիս ուղի կուսակցությունը, որն ընդամենը ձայների 14,5 տոկոսով (1991 թ. ընտրություններին՝ 24,5 տոկոս) զբաղեցնում է 3-րդ հորիզոնականը: Դա հիմնականում բացատրվում է կուսակցության ղեկավար շրջաններում առկա սկզբունքային հակասություններով, որի հետեւանքով մի շարք ազդեցիկ հետևորդներ անցան Մայր հայրենիքի եւ Բարեկեցության շարքերը, ինչպես նաեւ բարեկամական լիրայի անընդհատ աճող արժեզրկմամբ (մեկ շաբաթում՝ 20 տոկոս), ինչը մեծ հարված հասցրեց բնակչության եկամուտներին:

Իսկ ահա Բարեկեցության կուսակցությունը ձայների 17 տոկոսով (նախորդ ընտրություններին՝ 11 տոկոս) ընթանում է 2-րդ տեղում, հավակնելով դառնալ երկրի առաջատար քաղաքական ուժերից մեկը: Ինչո՞վ է բացատրվում իսլամական թեւի ակնկալվող հաջողությունը: Նախորդ ձմռանը, երբ այս կուսակցությունը մասնակի տեղական ընտրություններում հաղթանակ տարավ դասականության սնանկությամբ, հատկապես Ադրբեջանում բարձ դիվանագիտության կրած դարտությամբ:

Ուշագրավ է, որ իսլամական արմատականների դեմ ջիհադ է հայտարարել իր արկածախնդրությամբ հայտնի քաղաքական գործիչ Բ. Էջեւիթը: Օգտվելով խոշոր կուսակցությունների անգործությունից, Ձախ ժողովրդավարական կուսակցության նախագահն իրեն հռ-

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Իրանում տեսատեխնիկայի օգտագործման արգելքը վերացվել է

ԹԵՀՐԱՆ, 21 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ ԲՐՈՒՆԵՍ ՏԱՍՍ: Իրանում վերացվել է տեսատեխնիկայի օգտագործման արգելքը, որը գործում էր 1979 թվականից, Թեհրանից հաղորդում է Ֆրանս-պրես գործակալությունը՝ վկայակոչելով «Աբրար» շաբաթաթերթը:

Իրանի կառավարությունն այս շաբաթ ոստիկանությանը կարգադրություն է արել դադարեցնել վերը նշված արտադրանքի տարածողների դեմ դատարելու 15-ամյա կամոպանիան եւ թույլատրել է տեսատեխնիկայի արտադրությունն ու ներմուծումը: Այդուհանդերձ, տեսահոլովակների ներբերումն ու վաճառքը տակավին մնալու է կառավարության վերահսկողության ներքո, որը դրանց տարածումը թույլատրելու է միայն հատուկ դիտումից հետո: Արգելքը չեղյալ հայտարարելու որոշումն ընդունվել է այն բանի հետեւանքով, որ չնայած սահմանափակումներին տեսատեխնիկայի օգտագործումը լայն տարածում է գտել Իրանում:

Իրանի «Պարս էլեկտրիկ» պետական ընկերությունը ծրագրում է կարգավորել տեսամագնիտոֆոնների արտադրությունն օրական 2000-ի չափ:

Պատերազմ է հայտարարվել հարուստներին

ԲՐԱԶԻԼԻԱ, 17 ՓԵՏՐՎԱՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Բրազիլիայի համադեսական հարկային վարչությունը պատերազմ է հայտարարել հասարակության առավել հարուստ մասին: Սկսվել է 10 հազար ամենահարուստ բրազիլացիների հարկային հայտարարագրերի եւ ունեցվածքային դրության ամենամանրազնին ուսումնասիրությունը: Առանձնահատուկ ուշադրություն կնվիրվի 40 առավել բարձր վարձատրվող ֆուտբոլիստներին, որոնց մեջ են հավաքականի բոլոր «աստղերը»: Համադեսական գերատեսչության տվյալների համաձայն, բրազիլացի մարզասերների կուռերը ոչեմ է 6 միլիարդ դոլլարով ավելի հարկ մուծեին գանձարանին: Բոլոր հիմքերը կան կասկածելու, որ բրազիլացիների առավել հարուստ խավը թաքցնում է իր եկամուտների զգալի մասը: Համադեսական հարկային ծառայության խիստ ակտիվացումը կառավարությանը թույլ է տվել բյուջեի այդ հաշվածով եկամուտներն ավելացնել ավելի քան մեկ երրորդով:

1993 թ. մուտքերը հասել են ռեկորդային մակարդակի՝ 56 միլիարդ դոլլար:



ՏԻԿՆԱՅՔ ԵՎ ՊԱՐՈՆԱՅՔ

«Հայկական ավիաուղիներ» ավիաընկերության «Էյր տուրս» ճամփորդական գրասենյակն ամեն երկուշաբթի իրականացնում է ուղիղ ավիաչվերթներ դեպի Կրակով:
Ցանկացողների համար կազմակերպվում է եռօրյա շրջագայություն Կրակովից Բրատիսլավա (Սլովակիա):

Առաջին անգամ

Մարտի 3-ին «Էյր տուրս» ճամփորդական գրասենյակը կազմակերպում է ավիաչվերթ Երեւան-Քիշ (Իրանական կղզի Պարսից ծոցում, ազատ տնտեսական գոտի):

Զբոսաշրջիկները կտեղավորվեն հարմարավետ առանձնատներում, կճաշակեն պարսկական խոհանոցի համադամ կերակուրները, կայցելեն Քիշի բազմաթիվ արեւելյան եւ եվրոպական շուկաներն ու խանութները, որոնք իրենց բազմազանությամբ եւ էժանությամբ մրցակցում են աշխարհի ամենաէժան շուկաների հետ:

Մեր գրասենյակում դուք կարող եք ձեռք բերել նաեւ Յալթա-Ստամբուլ ծովային ճամփորդության ուղեգրեր:

Օգտվեք «Էյր տուրս» ճամփորդական գրասենյակի ծառայություններից եւ հաջողությունը միշտ կուղեկցի Ձեզ:

ՀԱՅԵՆ, ՊՈՒՇԿԻՆԻ 43, ՏԵԼ. 53-05-11, 53-39-22:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Ռուսաստանի քաղաքացիների համար սահմանը փակ է

ՔՅՈՆԻԳՍԲԵՐԳ, 21 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ ԲՐՈՒՆԵՍ ՏԱՍՍ: Լեհաստանը Կալինինգրադի մարզով անցնող իր սահմանը փակել է Ռուսաստանի քաղաքացիների գործարար ուղեւորությունների դեմ: Դա արվել է առանց նախնական ծանուցման: Չեւական առիթը նրանց անձնագրերում «Ավ ծառայողական» հատուկ նշման բացակայությունն է:

Դեռեւս մեկ տարի առաջ Ռուսաստանի արտգործնախարարությունը նոտա էր ուղարկել իր գործընկերներին, հաղորդելով Ռուսաստանի Դաշնությունում նոր արտասահմանյան անձնագրեր մտցնելու մասին, որոնց մեջ նմանօրինակ նշումներ չեն նախատեսված: Պատասխան նոտա չէր ստացվել, ինչն էլ դիվանագիտական գործունեության մեջ ընդունված է համարել դրական պատասխան: Առավել եւս, որ անձնագրերը փոխելուց հետո էլ դեպի Լեհաստան ռուսաստանցիների ծառայողական ուղեւորություններին ոչ մի խոչընդոտ չէր հարուցվում հարեւանների կողմից:

Միջադեպի կապակցությամբ ռուսաստանի եւ Լեհաստանի արտգործնախարարության հյուպատոսական ծառայությունները եռանդուն խորհրդակցում են երկու կողմերի համար ընդունելի լուծում գտնելու համար, իսկ մինչ այդ ընդունելը՝ սահմանն անցնել նախկին ռեժիմով: Բայց, ինչպես հաղորդեցին մարզային վարչակազմի միջազգային վարչությանում, դա տեղի կունենա ոչ շուտ, քան հաջորդ շաբաթվա վերջում: Այդ ընթացքում, գործարար ու ծառայողական շփումները կազմալուծված կլինեն, ինչը բացասաբար կանդրադառնա Կալինինգրադի մարզում գործող մի քանի հարյուր համատեղ ձեռնարկությունների գործունեության վրա: Ձեռնարկուները կարող են Լեհաստան մեկնել որպես զբոսաշրջիկներ, այդ կարգի ճանապարհորդների աջքեւ սահմանը բաց է: ■

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Անկայունության նշանն՞ էր

Խորհրդածություններ անելով, նախագահ Ալի Աքբար Ռաֆսանջանիի դեմ Իրանի Իսլամական Հեղափոխության 15-րդ ամյակի տոնակատարությունների ժամանակ կատարված փետրվարի 1-ի մահափորձի վերաբերյալ, The Economist հանդեսի թղթակիցը փետրվարի 18-ի համարում գրում է, որ միջադեպը ազդարարում է Իրանի ներսում տիրող անկայունության մասին: Իշխանությունները զարդ ձերբակալել են 20 կասկածելիների, եւ հաղթական մենաբանները գտնում են, որ փոփոխություններ են սպասվում այնտեղ:

Ռաֆսանջանիի հաղթականությունը մինչեւ օրս նպատակ է ունեցել երկիրը դուրս բերել տնտեսական կոզիացումից: Աջակողմյանների հետ դաշնակցելով, նա հաջողությամբ է առաջ տարել շուկայական հարաբերությունների բարեփոխումները, բայց նրանց կողմից արդյունքների է հանդիպել հենց որ գործը հասել է սոցիալական բարեփոխումների ոլորտը: Ողջունելով հանդերձ տնտեսական ոլորտի առաջխաղացումները, արտասահմանյան ներդրողներն, այնուամենայնիվ, չեն կարողանում անտարբեր մնալ երկրի անկայունության, մարդու իրավունքների շարունակվող արհամարհանքի եւ սոցիալական բվաստ դայմանների նկատմամբ: Ինչպես ուրիշ երկրներ, Իրանը նույնպես մեծապես տուժել է նավթի գների անկումից: Նրա ներկա եկամուտը հազիվ կնան է կազմում 1971-ի տվյալների, մինչդեռ բնակչությունը երկու երրորդով ավելացել է: Որոշ հետեւանք գներն այնտեղ աճել են, իսկ լրավճարները՝ նվազել: Երկիրը, որ ցարդ առանց դարտքերի էր առաջ շարժվում, այժմ կարճաժամկետ դարտքերի հսկա բեռի տակ է ընկել:

Այդ բոլորն ազդել են Ռաֆսանջանիի հեղինակության վրա: Մինչդեռ մեծացել է իր ախոյան Այաթոլլահ Ալի Խամենեի ազդեցությունը, չնայած վերջինս, ժողովրդի հոգեւոր առաջնորդը լինելով, չունի այն բարոյական ուժը, որը բնորոշ էր իր ուսուցիչ Խոմեյնիին, եւ որն անհրաժեշտ է երկրի ղեկավարը դառնալու

համար: Այնպես որ, ղեկավարության բնագավառում ստեղծվել է մի դատարկություն, որը կարող է, ըստ իրանցիների, լրացվել բանակի կողմից:

Մյուս հնարավորությունը, ըստ The Economist-ի թղթակցի, ախորի մեջ գտնվող ընդդիմադիր կուսակցության վերադարձն է: Նրա կորիզը մոջահեդներն են կազմում, եւ շահի ժամանակ նրանց «իսլամական մարքսիստական» էին համարում եւ դաժանորեն հետապնդում: Շահի անկումից հետո կարճ ժամանակ նրանք թաքստոցներ են գտել Իսլամական հեղափոխությունը, բայց հետագայում տարաձայնությունների հետեւանքով դարձել ընդդիմադիր: Այժմ մնալով համիմեդական մի կազմակերպություն, նրանք թարգել են «մարքսիստական» պիտակը եւ հեռու են արմատականներից: Իրանում ունեն հզոր բանակի հատուկ զորամասերը, իսկ Փարիզում սաղմնային վիճակում վարանդիական կառավարություն: Բանակն այնտեղ դատապարտվում է առավելապես Իրանի «բարյացակամ» վերաբերմունքի շնորհիվ: Եւ եթե մի օր երկու երկրները որոշեն հաշտվել, այն հավանաբար կկորցնի իր գոյության իմաստը: Իսկ Փարիզում գտնվող քաղաքական գրասենյակի կողմից կազմված Դիմադրության ազգային խորհուրդը, որը բաղկացած է տարբեր խավերի ու համոզմունքների տեր 235 ախորված իրանցիներից, անցյալ տարվա օգոստոսին Իրանում հավաքվելով ընտրել է Մահիամ Ռաջավիին մոջահեդների առաջնորդների կնոջը, որպես Իրանի առաջիկա նախագահի թեկնածու: Կին առաջնորդի ընտրությունը խորհրդանշական է այնքանով, որ ցույց է տալիս, թե ինչքանով է այդ կազմակերպությունը հեռացել արմատականներից, որոնք այդ հարցում խիստ դասակարգական են:

Իսկ ինչպե՞ս են վերաբերվում այդ խմբակցությանը Իրանում: Առայժմ վատ, ըստ լավատեղյակ աղբյուրների: Բայց ո՞վ է տեսել, որ ընդդիմադիր կողմին, այն էլ վարանդի, բացահայտ դաշտանություն ցուցաբերեն որեւէ երկրում: ■

ՀԱՅԱՍՏԱՆ

Ինչպես դարձանք դրամանիշերի հավաքարարներ

Ինչպես գիտենք, Հայաստանի Հանրապետությունը դրամանիշերի հավաքարարներ է դարձել:

ԱԶԳ

Մշակույթ

Անցյալ շաբաթավերջը հարուստ էր «Ազդարար-200» հոբելյանական տարվա շրջանակներում անցկացվող հիշարժան միջոցառումներով: Նախ, փետրվարի 18-ին Արտաշիսյան երկրների հետ մշակութային կապի և համագործակցության հայկական ընկերության դահլիճում տեղի ունեցավ գիտական զեկուցման ունկնդրում նվիրված ինչպես հայ առաջին դարբերականի լույսընծայման 200, այնպես էլ դրա հիմնադիր և հայ մամուլի առաջին երախտավոր Հարություն Իսահակյան Շմավոնյանի մահվան 170-ամյակներին:

«Հարություն Իսահակ Շմավոնյանի կյանքը և գործը» թեմայով զեկուցում կարդաց հայ լրագրության պատմության հմուտ մասնագետ, բանասիրության թեկնածու Մարդո Մինիթարյանը: Նա հանգամանորեն անդրադարձավ դպրական այն ժամանակաշրջանին և հասարակական միջավայրին, որտեղ աճել և գործել է հայ մշակույթի այս նշանավոր գործիչը: Ծնված լինելով 1750-ին, Պարսկաստանի Շիրազ քաղաքում, նա հսկաներ է ձեռնադրվում Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքում, ապա մագրահայության հոգևոր ոլորտին ծառայելու նպատակով մեկնում հեռավոր Հնդկաստան: 18-րդ դարավերջին այստեղ ծավալված լուսավորական հզոր շարժումն իր մեջ է առնում նաև հարուստ գիտելիքների տեր հայ մշակույթի գործունեության լայն ասպարեզ: Շահամիր Շահամիրյանի, Մովսես Բաղրամյանի, ապա և Հովսեփ Էմինի կողքին նա ևս տգործում է իր մայր հայրենիքը շտապելով ազատագրելու և այնտեղ ազգային ինքնակեցության հասատելու նվիրական գաղափարներով: Վկան նրա բեղմնավոր և արդյունավետ գործունեությունը, մասնավորապես գրահրատարակչության մարզում: Հարություն Շմավոնյանն իրար հետևից լույս աշխարհ է հանում հայոց և օտար մեծերի աշխատություններն ու երկասիրությունները սկսած Դավիթ Անհաղթի «Գիրք Սահմանաց»-ից մինչև իմաստասիրական այլաբանական երկեր և բառարաններ: Նրա լուսավորական գործունեության բարձրակետն էր անշուշտ հայերեն առաջին ամսաթերթի «Ազդարարի» լույսընծայումը (1794 թ), որը կոչված էր դարձյալ ծառայելու նույն գործին՝ իր ընթերցողներին լուսավորելու և անկախ Հայաստանի առաջադեմ բաղաքացիներ դաստիարակելու առաքելությունը: Որքան էլ որ կարճատև եղավ ամսաթերթի կյանքը մոտ 2,5 տարի, այն խորը հետք թողեց մեր հոգևոր մշակույթի դասմության մեջ դայմանավորելով հետագա շրջանի հայ մամուլի մյուս օրինակների հրատարակումը: Բանախոսն իր զեկուցման վերջում վերադարձեց նաև «Ազդարարի» անդրանիկ համարն իր արժանավոր բաղաքացիներին նվիրելու նպատակով: Ինչպես նաև հայ ժողովրդի դարավոր դասմության այն ժամանակահատվածին, երբ դասմական ճակատագրի բերումով հեռավոր Հնդկաստանում հայտնված մեր ժողովրդի զավակներ, ի գին մեծ զոհողությունների, ծավալեցին ազգանվեր լայն գործունեություն հիմնելով կրթամշակութային բազում հաստատություններ: Ի մասնավորի նա «լուսավոր դպահ» անվանեց հայերեն առաջին դարբերականի լույսընծայման իրադրությունը: Այս առթիվ վեհափառ հայրապետը հատուկ կոնդակ էր նախադրատեսել, որն առաջին անգամ ընթերցվեց կիրակնօրյա դասարաքի ժամանակ: Ողջ աշխարհով սփռված հայոց հոգևոր բնակիչներ հոդվածում էր դասաշաբ հանդիսավորությամբ նշել այս կարևոր հոբելյանը, ոգեկոչել հայ մամուլի առաջամարտիկ Հարություն Շմավոնյանի լուսավոր հիշատակը: Ապա հայոց հայրապետն անդրադարձավ այսօրվա հայ մամուլի խնդիրներին, թե սփյուռքում, թե մայր հայրենիքում նրա կատարած մեծ դերին, այն վիճակին, երբ հայ բերքը միշտ էլ հանդարտորյա հաց է եղել մեր ազգակիցների համար և շարունակում է մնալ այդպիսին նաև մեր օրերում:

Մեր նորօրյա լրագրողներիս նախահոր և մամուլի առաջին երախտավորի հիշատակը միշտ դայծառ ելլիցի:

ԴԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայ մամուլի առաջին երախտավորի հիշատակին

ԼԵՎՈՆ ԼԱՌԻԿՅԱՆ



ՀՈԲԵԼՅԱՆ

Թումանյանական գերեկույթ

«Ամենայն հայոց բանաստեղծին» նվիրված շաբաթօրյա երաժշտական միջոցառման համար ընտրված ոչ օրը, ոչ էլ վայրը դատահական չէին: Փետրվարի 19-ին լրանում էր մեծն Թումանյանի ծննդյան 125-րդ տարեդարձը, իսկ Ազգային օպերայի և բալետի ակադեմիական թատրոնը միշտ էլ եղել է արվեստի այն օջախը, որի խաղացանկի լավագույն ստեղծագործությունների հիմքում ընկած են եղել հանճարեղ լոռեցու գրվածքները («Այմաստ», «Անուշ» և այլն): Հիշյալ օրն Օպերայի թատրոնի Հայելադաս սրահում հատվածներ ցուցադրվեցին տարիներ առաջ նկարահանված «Այմաստ» օպերա-ֆիլմից: Ապա բացման խոսքով հանդես եկավ և օրվա ողջ հայտագիրը դատշաճ հանդիսավորությամբ վարեց Ազգային օպերայի գեղարվեստական ղեկավար Տիգրան Լևոնյանը: Նա անդրադարձավ մեր հոգևոր-մշակութային կյանքի այս նշանակալից հոբելյանին, մեր կյանքում և ընդհանրապես արվեստում Հովհաննես Թումանյան-երևույթի ունեցած խորհրդին: Հիշեցնելով, որ Թումանյանի «Անուշ» դրամի հիման վրա Արմեն Տիգրանյանի գրած համանուն օպերան միշտ էլ եղել է իրենց թատրոնի գարդը թե հայրենիքում, թե արտասահմանյան հյուրախաղերի մեկնելիս, նա խոսեց իրենց թատրախմբի հեռագա ծրագրերի մասին, առաջադ անելիքներ համառոտակի ձևակերպելով այդպես. «Վերադառնանք Թումանյանին»: Սա նշանակում է վերադարձ ազգային անխաբար արմատներին և հոգեբանությանը, մեր գեղարվեստական հանիրավի մոռացված ավանդույթներին և ամենակարևորը մատ-

ծողությանը: Ներկաները, որոնց մեջ էր նաև մեծ բանաստեղծի թոռնուհին գրականագետ Իրմա Սաֆրազբեկյանը, տեղեկացան, որ դատրաստվում է «Անուշի» նոր բեմադրություն, որի աշխատանքներն ընթանում են Թումանյանին և Տիգրանյանին, նրանց ստեղծագործական մտահղացումներին ավելի շատ մոտենալու և դրանք մարմնավորելու ոգությամբ:

Այդ օրը բեմ կամերային բեմում ողջ օպերան ցուցադրելու ոչ մի հնարավորություն չկար, բայց հանդիսավարի դատկերավոր խոսքն և միմյանց հաջորդող համերգային կատարումների ժամանակ հնչեցին «Անուշի» հիմնական հատվածները: Դրանց իրենց մասնակցությունն էին բերել օպերային թատրոնի առաջատար և երիտասարդ ուժերը՝ կարծես հավատալով սերունդների հերթափոխն ու ավանդների շարունակելիությունն այս մարզում: Գնդասանին Սիմոնյանը երգեց Թաբուլի դերերգը Ալեքսանդր Սղենդիարյանի «Այմաստ» օպերայից: Ապա երաժշտասերներին ներկայացվեց նախ, Մոսիի դերերգը (երգիչ Վաղարշակ Օհանյան), այնուհետև տարբեր տարաներ օպերային հյուսվածքից երգչուհիներ Մարիետա Անտոնյանի (Անուշի մայր), Հասմիկ Հացագործյանի (Անուշ) և Սարոյի այսօրվա լավագույն դերակատար Ռազմիկ Պապիկյանի մասնակցությամբ: Վերջին երկուսը միասին երգեցին նաև Անուշի և Սարոյի զուգերգը, իսկ առանձին կատարեցին Անուշի և Սարոյի դերերգերը: Ցերեկույթին մասնակցեցին նաև երիտասարդ երգիչներ Սարգիս Թորոսյանն ու Դրասամաս Պետրոսյանը: Նրանց բոլորին նվագակցում էր նոր հաստեղին բեմի վրա էր Ազգային օպերայի և բալետի թատրոնի կամերային նվագախումբը Վիկեն Չարչոգլյանի ղեկավարությամբ: Լ. Լ.

ԱԶԴԱԳԻՐ

Լ. Ճգնավորյանը՝ երիտասարդ հայր

Ավստրիայում Հայաստանի Հանրապետության դեսպանության հյուպատոսական ծառայությունն առաջին անգամ հանձնել է ծննդյան վկայական: Այն տրվել է Լորիս Ճգնավորյանի նորածին որդու՝ Մանվեի աշխարհ գալու առթիվ: Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախմբի հանրածանաչ դեկավարի աղջիկը ծնվել է հունվարի 25-ին Վիեննայում: Այդ երջանիկ դատահն մանուկն գտնվում էր ինքնաթիռում Նյու Յորքից ավստրիական մայրաքաղաք ուղեւորվելիս: Ինչպես մեզ հայտնեցին Լ. Ճգնավորյանի մերձավորները, երեխայի քաշը 3,4 կգ է, հասակը՝ 49 սմ:

Սիդնեյում երեք հայկական դարախումբ

Ինչպես հաղորդում է Սնարֆ Իմա դրեսը, Հայաստանի օպերային թատրոնի տղամարդկանց երգչախմբի դիրիժոր Կ. Սարգսյանի եւ Հայաստանի հանրապետության վաստակավոր արտիստ Ա. Ղազարյանի նախաձեռնությամբ Սիդնեյում ստեղծվել են երեք նոր, հայկական, ստեղծագործական կոլեկտիվ՝ Ավստրալիայում բնակվող հայերի մեծահասակների եւ մանկական երգչախմբերը, ինչպես նաեւ ժողովրդական դարի համույթը:

ՖՐԱՆՍԻԱ

Դանիել Բիլալյանը վերադարձավ

ՊԱՖՖԻ ՀԵՐՄԱՆ ԱՐԱԲՅԱՆ, երկու տարվա «դարտադրված» անգործությունից հետո ֆրանսիական «Ֆրանս 2» հեռուստակայանի հանրածանոթ ու սիրված լրագրող Դանիել Բիլալյանը փետրվարի 14-ին վերսկսեց իր աշխատանքը երկնագույն էկրանին:

Բիլալյանը երկու տարի առաջ հեռացվել էր աշխատանքից՝ խաղախական ինչ-որ խոհանոցային խաղերից հետո, որոնք, դժբախտաբար, եզակի չեն այս բնագավառում: «Ֆրանս 2»-ի նախկին ղեկավարներից մեկի հետ ծագած անվերջ վիճաբանություններից հետո նրան արգելվել էր ամեն երեկո ժամը 20-ի լուրերի հաղորդման ժամանակ եթեր դուրս գալ: Ի դեպ, բոլոր ֆրանսիական հեռուստակայանների համար սա լավագույն ժամանակն է, եւ գովազդների դատվերատուներն այս ժամի համար ամենաթանկն են վճարում: Այսդիսով, ամեն երեկո տասնյակ միլիոնանոց հանդիսատեսի առջեւ ելույթ ունեցող Բիլալյանն ստիպված էր եթեր դուրս գալ շաբաթը մեկ անգամ՝ իր հեղինակած «Երեքշաբթի երեկոյան» լրատվական ծրագրով:

Ծրագիրը հանդիսատեսների շրջանում մեծ հետաքրքրություն էր առաջացրել: Սակայն գոյատեւեց՝ մինչեւ 1991 թ. դեկտեմբերի 3-ը:

Այդ երեկո հաղորդմանը մասնակցելու էին հրավիրվել ֆրանսիական ծայրահեղ աջ, նույնիսկ նեոնացիստական հոսանքի ներկայացուցիչներ, որոնք առիթն օգտագործել էին իրենց գաղափարական քարոզչության համար: Հետեւյալ օրը մեծ աղմուկ բարձրացավ, եւ Դանիել Բիլալյանի «Երեքշաբթի երեկոյան» հաղորդումն անմիջապես տեղ գրավեց պահոցներում եւ վերջ:

Իսկ հիմա «Ֆրանս 2» պետական հեռուստակայանն իր մրցակից «TF-1» մասնավոր հեռուստակայանի «Կեսօրվա լուրեր» ծրագրի դիմաց առաջարկում է Դանիել Բիլալյանի «Ցերեկվա լուրերը»: Իր նոր հաղորդման մասին լիբանանահայ բողոքական լրագրողն ասում է. «Ամենակարեւորն իմանալն է, թե ում համար ես նախատեսում հաղորդումը: Մեր հաղորդումները պիտի լինեն համայն Ֆրանսիական հեռուստադիտողի համար՝ գրելով այն տպավորությունը, թե ամեն բան միայն Փարիզում է կատարվում»:

1992-ին Հայաստանի հեռուստատեսության աշխատակիցների՝ Ալեքս Ալթունյանի, Մերի Զարյանի եւ Գագիկ Համբարձումյանի հետ այցելեցինք Բիլալյանի տուն՝ նկարահանումների: Իհարկե, դա «արգելքի» ժամանակաշրջանն էր, եւ հայ գործընկերների այցելությունը հաճո էր նրան:

33 ռադիոհեռուստատեսության տեսարժեքության պահոցներում այսօր գտնվում են Դանիել Բիլալյանի՝ ֆրանսիական էկրանից «Հայաստանի եռկրաբերձի» եւ «Դարաբաղի դատերազմի» մասին լրատվությունների ժապավենները: ■

ԴԱՐԱԲԱՂ

Ամիոփվեցին Եղիշեի Անվան ԼՂՀ նախարարների խորհրդի ամենամյա մրցանակաբաշխության 1993 թվականի արդյունքները

ԼՂՀ մամուլի եւ լրատվության դեպարտամենտի աշխատակից Սիլվա Գաբրիելյանը Նոյյան տաղան գործակալությանը հայտնեց, որ առաջին հատուկ մրցանակ շնորհվեց Քերոլայն Քոկսին եւ Ջոն Էքներին «Էրնիկական մաֆրությունը ընդդիմի մեջ» գրքի համար: «Դաժան դրախտավայր» գրքի համար Հռաչյա Հովհաննիսյանը արժանացավ երկրորդ, հատուկ մրցանակի: Երրորդ հատուկ մրցանակը շնորհվեց Տանյա Լիխաչովային՝ փաստագրական «Դատերազմը եւ մարդիկ» կինոֆիլմի համար: Առաջին մրցանակի արժանացավ Ռոբերտ Եսայանի «Տարածություն եւ ոգի» գիրքը: Երկրորդ մրցանակը ստացավ «Ձայն եմ խնդրում անմահների համար» եւ «Ուղերը բայլելու են լուսաբացին» գործերի հեղինակ Սեյրան Քամալյանը եւ «Զարթոնք» դրվագման համար Ալբերտ Սաֆարյանը: Երրորդ մրցանակ շնորհվեց Հակոբ Բաղրամյանին, Նորիկ Գասպարյանին, Հրաչյա Մաբեսոյանին, Անկաղի Թովմասյանին, Վոլոդյա Աշեիանյանին, Վարդգես Բաղրամյանին: Մի խումբ հեղինակներ արժանացան խրախուսական մրցանակների: Ինչպես հուշում է մրցանակաբաշխության անվանումը, ներկայացված գործերի բեմն արցախյան հերոսական գոյամարտն է: ■

digitised by A.R.A.R.@

Մարզական

ԻՐԱՆԱԿԱՆ ՕՐԱԳՐԻՑ

Կանայք էլ ասպարեզ են դուրս գալիս

ՍԱՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ,
Մարզական մեկնաբան

Երեսի մեր ընթերցողներից ոչ բոլորը գիտեն, որ տարիներ շարունակ Իրանի Իսլամական Հանրապետության հեղափոխությանը նվիրված համաժողովական խաղերին մասնակցել են միայն տղամարդիկ: Եվ ահա հեղափոխության 15-րդ տարեդարձի առիթով առաջին անգամ ասպարեզ դուրս եկան գեղեցիկ սեռի ներկայացուցիչները: Համաժողովական առանձին խաղեր կազմակերպվեցին նաև կանանց համար: Նիշը է, ծրագիրը դեռ սահմանափակ է՝ շախմատ, բասկետբոլ, վոլեյբոլ, բադմինտոն, սեղանի թենիս, սակայն կարևորն այն է, որ առաջին քայլը կատարված է: Ընդ որում, Իրանը մասնակիցներ ներկայացրեց բոլոր մրցաձևերից: Ինչ խոսք, առայժմ մեզ համար դեռ շատերին կան այս երկրում: Այսպես, կանանց մրցումների ժամանակ որևէ տղամարդ իրավունք չուներ մտնել մարզադահլիճ: Լուսարձակներից մեկը դաստում էր, որ բասկետբոլի կանանց մրցումների ժամանակ, երբ Թուրքմենստանի հավաքականի տղամարդ մարզիչ ուզում էր մտնել մարզադահլիճ, նրան կտրականապես մերժեցին: Թիմի աղջիկները աղերսագին խնդրում էին թույլատրել խաղի ժամանակ ներկա գտնվել իրենց մարզչին, նույնիսկ լացում էին, սակայն կազմակերպիչները անդրդվելի էին: Ստիպված Թուրքմենստանի հավաքականի տղամարդ մարզիչը ուզում էր մտնել մարզադահլիճ, նրան կտրականապես մերժեցին: Թիմի աղջիկները աղերսագին խնդրում էին թույլատրել խաղի ժամանակ ներկա գտնվել իրենց մարզչին, նույնիսկ լացում էին, սակայն կազմակերպիչները անդրդվելի էին: Ստիպված Թուրքմենստանի հավաքականի տղամարդ մարզիչը ուզում էր մտնել մարզադահլիճ: Բայց փոխարենն, արդեն կանայք իրավունք ունեն ներկա գտնվելու տղամարդկանց մրցումներին: Այդպես, նրանցից շատերը հաճախում էին բերեն ատելիկայի մենակներին: Փաստն այն է, որ հեռանկարներ են բացվում նաև կանանց մեր ներկայացուցիչների համար ճնշան հարկադիր անգործության ժամանակահատվածում մասնակցել համաիրանական խաղերին: Այդ մրցումներում կարող է հաջող հանդես գալ Հայաստանի կանանց բասկետբոլի հավաքականը:

«Արարատի» հոբելյանը

Այս տարվա հուլիսին լրանում է Իրանի հայ մարզամշակութային «Արարատ» կազմակերպության հիմնադրության եւ գործունեության 50-ամյակը: «Արարատ» մարզամշակութային բնույթ ունեցող միությունն անցնող տասնամյակների ընթացքում իր նվիրյալ անդամների ժրաջան աշխատանքների շնորհիվ ընդլայնվեց, դառնալով 2200 անդամ ունեցող հզոր կազմակերպություն, իր մեջ ընդգրկելով բազմաթիվ միություններ եւ մասնաճյուղեր, ամբողջ Իրանի հայաբաս վայրերում: Այսօր «Արարատը» մասնաճյուղեր ունի Թավրիզում, Ուրմիայում, Գյարադաղում, Մաշադում, Շիրազում: «Արարատն» իր ուրույն ներդրումն ունեցավ իրանահայ հանրային հասարակական կյանքում: ՀՄԱԿ-ի հիմնադրության եւ գործունեության 50-ամյակը հաչանող ձեռնարկներն ու հանդիսությունները կկայանան 1994 թ. մայիս-դեկտեմբեր կիսամյակի ժամանակաշրջանում: Մարզական առումով տոնահանդեսի ծրագրի մեջ մտնելու են նաեւ ամենամյա համահայկական խաղերը, որոնք այս անգամ տեղի են ունենալու սեպտեմբերի 1-ից մինչեւ հոկտեմբերի վերջը: Դրանց մեջ մտնելու են ֆուտբոլի բասկետբոլի, վոլեյբոլի մրցաշարերը, սեղանի թենիսի, բերեն ատլետիկայի, լողի, շախմատի, բոնցքամարտի մրցումները: Նախատեսվում է Հայաստանից հրավիրել բասկետբոլիստներին, բերեատլետներին եւ թենիսիստներին:

22 տարի է, ինչ Թեհրանի լուսաբաղձ վայրերից մեկում գործում է «Արարատ» կազմակերպության մարզավանը: Ժամանակակից բոլոր պահանջներին բավարարող այդ խոշոր մարզական բազան, որն ունի ֆուտբոլային մեծ խաղադաշտ, լողավազան, բասկետբոլի դահլիճ, թենիսի խաղահրապարակներ, հանդիսությունների մեծ սրահ եւ բազմաբնույթ այլ կառույցներ, զբաղեցնում է 7 հա տարածություն: Ողջ սփյուռքում եւ նաեւ Հայաստանում նման մարզական կառույց գոյություն չունի: Այն մեծամասնակ իրանահայ համայնքի համար հանգստյան օրերին այստեղ, ինչպես ասում են, ասես զգելու տեղ չկա: Հայ պատանիներն ու երիտասարդները ու նրանց ծնողները ժամ առաջ ձգտում են հանդիպել միմյանց: Բոլոր հայկական խոշոր միջոցառումներ կազմակերպվում են այստեղ: Դահլիճները գործում են մեծ ծանրաբեռնվածությամբ: Մարզադաշտում անցկացվում են Իրանի ֆուտբոլի բարձրագույն խմբի առաջնության հանդիպումներ: Շատ մեծ գործ են անում «Արարատ» կազմակերպության նախագահ Վանիկ Պետրոյանը, մարզական դաստիարակության գծով փոխնախագահ Ալֆրեդ Հավանը: Հենց վերջիններիս ակտիվ միջամտությամբ հնարավոր եղավ Հայաստանի դատվիրակների մասնակցությունը համաիրանական խաղերին: Իրանը մեծ աղորդի մասնագետների

«Արարատ» մարզավանը

Վիլյամ Հաստոյով

խիստ կարիք ունի, եւ ինչպես նշում է Ալֆրեդ Հավանը, եթե չլիներ դարաբաղյան խնդիրը եւ հայ-ադրբեջանական հակամարտությունը, ապա այսօր Իրանում կաշխատեին 30-40 հայաստանցի մարզիչներ: Համենայն դեպս, մեկ տարուց ավելի է, ինչ «Արարատ» բասկետբոլային թիմի մարզիչ է աշխատում Վիսալի Զաստոխովը, որը վերջերս Իրանի բասկետբոլի ֆեդերացիայի կողմից հրավիրվեց գլխավորելու այդ երկրի ազգային հավաքականը: Վերջինս Ինդոնեզիայում, մասնակցելով Ասիայի առաջնությանը, 27 տարվա ընթացքում առաջին անգամ գրավեց պատվավոր 4-րդ տեղը: Իրանական կողմը ուզում է, որ Վիսալի Զաստոխովն այսուհետ աշխատի միայն հավաքականի հետ:

«Արարատ» մարզամշակութային կազմակերպությունը 50-ամյա տոնակատարության առթիվ կոչով դիմել է Հայաստանի եւ սփյուռքի մարզամշակութային ու հասարակական միություններին.

«Արարատի» կոչը

Կյանքը պետք է արժեվորել եւ ոչ միայն ապրել: Պետք է աստիճանից վեր բարձրանալ եւ աստիճան բրել հավերժական արժեքների ներգործությամբ, որպես աղբյուր երջանկության եւ ազգային սնուցումի ու հոգատարության:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Գոյատեւելու կամքով հզոր մեր ժողովուրդը սփյուռքի դարատարյալ դժվարություններում, մարդկային ու ազգային վեհ արժեքներ սերունդներին փոխանցելու եւ իմաստնացման համաժողովական դաստիարակությունը դյուրացնելու համար, կենսագործեց «Միությունը ուժ է» կարեւոր կարգախոսը, հիմնադրելով համաժողովական բազում միություններ եւ կազմակերպություններ: 1944 թ. Թեհրանում հիմնադրվեց ներկայիս բազմահազար անդամակցություն ունեցող ՀՄԱԿ-ը: Մարզամշակութային ասպարեզը սերունդների դաստիարակության փորձաքաշ դարձնելով, մշակույթի վեհ ու լուսո տաճարում վառեց սերունդների լուսատենչ հոգիները: Վերիվայրումներով լի «Արարատի» 50 տարիները եղան հավատքով առնչցուն ճշմարիտ գործի տարիներ, որտեղ 3 հաջորդական սերունդներ մարդկային ու ազգային կերպարն անաղարտ պահելով, մաղ ինքնակերտումն արարեցին: «Արարատի» սերունդը որպես ազգանվեր մարտաժ, իր արժանի ներդրումը կատարելով մարդական, մշակութային, հոգեբանական, հասարակական ասպարեզներում, կյանքն արժեվորելով ապրեց: Արդ, ՀՄԱԿ-ը իր հիմնադրության 50-ամյակի շեմին որոշում ունի պատշաճ ծրագրմամբ նշելու կազմակերպության կենսագործունեությունը, որի ընդմիջից վերանորոգ շնչով պիտի արժեվորի «Միությունը ուժ է» առավել արժեք, մարդուժի կերտումի իմաստությունն: Այսպես կոչ ենք անում ի սփյուռս եւ ի Հայաստան մարզամշակութային եւ հասարակական միություններին ու «Արարատի» սերնդին ձայնակցելու մեզ պատշաճ ծրագրերով նշելու վերոհիշյալ իմաստնությամբ միութենական գործունեությունը:

ՀՄ «Արարատ» կազմակերպություն

(Խնդրում ենք Հայաստանի եւ արտասահմանի հայ մամուլից արտատպել վերոհիշյալ կոչը):

ԵՎՐՈՊԱ-96

Տույսեր դեռ կան

Ընթացիկ մրցաշրջանում Հայաստանի հանրապետության համար մարզական կարեւոր իրադարձություններից մեկն, անկասկած, կլինի Եվրոպայի 1996 թ. առաջնության ընտրական մրցաշարը, որին առաջին անգամ կմասնակցի Հայաստանի ազգային հավաքականը: Հիշեցնենք, որ մեր ընտրանին ընդգրկված է 2-րդ ընտրական խմբում, որտեղ մրցակիցներն են Եվրոպայի չեմպիոն Դանիայի, ինչպես նաեւ Իսպանիայի, Բելգիայի, Մակեդոնիայի եւ Կիպրոսի հավաքականները: Ինչպես հայտնի է, ՈւԵՖԱ-ի տարօրինակ որոշմամբ ՀՖ հավաքականը սեփական հարկի տակ հանդիպումները պետք է անցկացնի չգոյ դաշտում: ԱՊՀ-ի տարածքում, այն պատճառով, իբր Հայաստանը պատերազմող երկիր է եւ հնարավոր չէ ապահովել մրցակից թիմերի անվտանգությունը: Նման որոշումը, բնականաբար, մեծ դժգոհություն էր առաջացրել եւ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան բողոքով դիմել էր ՈւԵՖԱ-ին, հանգամանորեն ներկայացնելով հանրապետությունում տիրող վիճակը: Ցավոք, ինչպես երեւում է ֆուտբոլի եվրոպական ասոցիացիայի ղեկավարներին չէին բավարարել ներկայացված փաստարկները եւ որոշումը մնացել էր անփոփոխ: Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան ստիպված սկսել էր «սեփական» դաշտի որոնումները: Բանակցություններ էին վարվում հանդիպումները Կրասնոդարում անցկացնելու վերաբերյալ: Եւ ահա նոր հաղորդագրություն ստացվեց ՈւԵՖԱ-ից: Մրցումների կազմակերպման արտակարգ կոմիտեն սկզբունքորեն դեմ չէ, որ Հայաստանի հավաքականը Եվրոպայի առաջնության ընտրական խաղերն անցկացնի հանրապետության տարածքում, պայմանով, որ ապահովվի մրցակից թիմերի անվտանգությունը: Միաժամանակ, կոմիտեն հայտնել է, որ եթե տարածաշրջանում ընթացող ռազմական գործողությունները որեւէ վտանգ ներկայացնեն խաղերի մասնակիցներին, ապա ՈւԵՖԱ-ն իրեն իրավունք կվերապահի հանդիպումները տեղափոխել ԱՊՀ այլ տարածք: ՈւԵՖԱ-ն անվտանգության ապահովման երաշխիքներ է պահանջում, իսկ այդ երաշխիքները կարող է տալ միայն Հայաստանի կառավարությունը: Կասկածից վեր է, որ մեր հանրապետությունն անպայման նման երաշխիքներ կտա, առավել եւս, որ անվտանգության որեւէ սպառնալիք չկա եւ աղմուկն ավելի շատ հորինված է: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ վերջապես ՈւԵՖԱ-ի ղեկավարները հասկացել են իրենց որոշման անհեթեթ լինելը: Հիշեցնենք, որ անցյալ տարի նման վիճակում էր հայտնվել Թբիլիսիի «Դինամոն» եւ Հայաստանի կառավարությունը ՈւԵՖԱ-ին համոզելու համար ստորագրություններ էր հավաքել Վրաստանում գտնվող օտարերկրյա դեսպաններից, վկայելու Վրաստանում տիրող կայուն իրավիճակի մասին եւ ուղարկել ֆուտբոլի Եվրոպական ասոցիացիայի շտաբբնակարան: Հասկացված ենք, որ Հայաստանի իշխանություններն էլ կանեն հնարավոր ամեն ինչ համոզելու ՈւԵՖԱ-ին, որ խաղերը տեղի ունենան Հայաստանում: Առավել եւս, որ հարցը նաեւ քաղաքական մեծ նշանակություն ունի:

Շուտով՝ հայտնի կդառնա երկրորդ խմբի խաղացանկը, որտեղ ընդգրկված է Հայաստանի հավաքականը: Խաղացանկի ժամկետների ճշգրտման եւ դրա վերջնական հաստատման համար մարտի 1-ին Բելգիայում կկայանա երկրորդ խմբում ընդգրկված երկրների հավաքականների եւ ֆուտբոլի ֆեդերացիաների ներկայացուցիչների խորհրդակցություն: Հայաստանից այդ խորհրդակցությանը կմասնակցեն ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Էդուարդ Մարգարովը եւ ՀՖ ֆուտբոլի ֆեդերացիայի պատասխանատու քարտուղար Էմին Քաղյանը:

ՕԼԻՄՊԻԱԴԱ-XVII

Կանանց արդարանում են

Դեռ մինչեւ ձմեռային 17-րդ օլիմպիական խաղերի սկսվելը, մասնագետներ, ի մի բերելով նախկին նվաճումները, եկել էին այն եզրակացության, որ մրցումներում բոլորից հաջող հանդես կգան նախկին Խորհրդային Միության հանրապետությունները միասին: Ըստ այդ հաշվարկի, ԽՍՀՄ-ը (ԱՊՀ թիմերին այդպես ներկայացրին գուշակողները) պետք է վաստակի 193 մեդալ, որոնցից 78-ը ոսկե, 57 արծաթե եւ 58-ը բրոնզե: Երկրորդ տեղը տրվում էր մրցումների կազմակերպիչ Նորվեգիայի հավաքականին՝ 190 մեդալ՝ 63 ոսկե, 67 արծաթե եւ 60 բրոնզե մեդալ: Երրորդը ԱՄՆ-ի հավաքականն է՝ 134 մեդալ: Առայժմ

կանխատեսումները արդարացում են: Բոլորից հաջող են հանդես գալիս Նորվեգիայի եւ Խ. Միության հեծնդրդ Ռուսաստանի հավաքականները, որոնք վաստակել են 15-ական մեդալ: Նորվեգացիները ձեռք են բերել 8, իսկ ռուսները 7 ոսկե մեդալ: Առանձին հաշվարկով, Ռուսաստանի հավաքականին տվում էր ընդհանուր երրորդ տեղը: Ինչպես նշեց այս երկրի պատվիրակության ղեկավարներից մեկը՝ Վիկտոր Մամատովը, Ռուսաստանի հավաքականն առայժմ գերազանցում է սպասելիները եւ լավ հնարավորություններ ունի ընդհանուր հաշվարկով գրավել երկրորդ տեղը:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ
ՕՐԱԿԱՐԳ

ԱԴՐԲԵՋԱՆ

Բաքուն հեռանո՞ւմ է Մոսկվայից

«Կոմերսանտ» օրաթերթում տպագրված հոդվածում Գեորգի Բովը գրում է, որ ազերի արտգործնախարար Հասան Հասանովը նամակ է հղել ԱՄՆ-ի պետքարտուղար Ուորեն Քրիստոֆերին, հայտնելով նրան իր երկրի դաշտասակարությունը միանալու «Գործակցություն հանուն խաղաղության» ծրագրին: Այսպիսով, Ուկրաինայից հետո, Ադրբեջանը դառնում է ԱՊՀ երկրներից երկրորդը, որը ցանկանում է ավելի սերտ հարաբերություններ հաստատել ՆԱՏՕ-ի հետ եւ միանգամայն պարզ բնորոշում Մոսկվայից հեռանալու եւ Վրաստանի ու Հայաստանի օրինակին չհետեւելու նախագահ Հեյդար Ալիեւի ջանքերը: Մոսկվայից ձերբազատվելու եւ ՆԱՏՕ-ի շրջանակներին ավելի մոտենալու առաջին քայլերը Ալիեւը կատարեց մոտ մեկ ամիս առաջ, երբ մերժեց Թուրքիայի եւ Իրանի հետ ունեցած իր սահմաններին, ինչպես նաեւ ադրբեջան-Հայաստան հակամարտության գոտում տեղակայել ռուսական զորամիավորումներ: Ըստ երեւույթին, նա մոռացության է տվել նաեւ անգլիական Բրիտիշ Փեթրոլիումի հետ ծրագրվող կոնսորցիումի ստեղծման եւ Թուրքիայի հետ նավթատար խողովակաշարի անցկացման հարցերում Ռուսաստանին հաշուի էլոտա շնորհելու իր խոստումները: Մոսկվայի հետ Ալիեւի տարաձայնությունները նույնպես զգալի էին, բարուկում է հոդվածագիրը, նախագահի բանագնաց Վլադիմիր Կազիմիրովի միջնորդական առաքելության ձախողումից. Բաքուն ոչ միայն խախտեց հայ-ազերի հրադադարի համաձայնագիրը, այլ նաեւ պահանջեց վերանայել ԱՊՀ կոլեկտիվ անվտանգության պայմանագիրը: Գաղտնիք չէ, որ Բաքուն փորձում է միջազգայնացնել Ղարաբաղի հակամարտությունը: Մյուս կողմից, Լոնդոնն այժմ պատրաստվում է ավելի ակտիվացնել այդ հակամարտությունը ավարտելու իր խաղաղասիրական ջանքերը, ունենալով դրա համար բավականին ամուր փաստաթղթեր: Ֆինանսական օգնություն եւ ներդրումներ երեւանում եւ Բաքվում: Սա, անտարակույս, եզրակացնում է «Կոմերսանտ» թերթը, ավելի «ծանրակշիռ» փաստարկ է, քան Մոսկվայի խաղաղարար զորքեր ուղարկելու խոստումները: ■

ԲՈՍՆԻԱ

«Սարաեւոյի ճակատամարտը շահեց Մոսկվան»

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ: Արտասահմանի լրատվության զանգվածային միջոցներն շարունակում են սնեռուն ուշադրություն դարձնել Բոսնիայում ու Հերցեգովինայում տիրող իրադրությանը:

«Սարաեւոյի ճակատագրի շուրջ նումից բացի, կիրակի օրը գրեց «Վաշինգտոն փոստը», Բոսնիային առնչվող ներկայիս միջազգային մանեւրները կարող են դարձել, թե Բալկանները կմնա՞ն արդյոք Վաշինգտոնի ու Մոսկվայի համագործակցության ասպարեզ, թե կդառնան «Սառը դաշտերազմի» ժամանակների երկու նախկին բշնամիների առճակատման նոր վիրակ: Այն փաստը, որ Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը մերժեց բոսնիացի սերբերին ՆԱՏՕ-ի ներկայացրած վերջնագիրը, ինչպես նաեւ Ռուսաստանի խաղաղարար ջանքերի գնահատման հարցում Բիլ Քլինթոնի վարչակազմի զսպվածությունը, վկայում են երկու գերտերությունների հարաբերությունները բարելավող հին ու խոր կասկածամտության մասին»:

Անգլիական «Սանդի թելեգրաֆ», մեկնաբանելով Բոսնիային առնչվող ռուսական նախաձեռնությունը, գտնում է, որ «այն մեծ շահում բերեց Բորիս Ելցինին»: «Մեկ ճարպիկ քայլով, նշում է թերթը, Ռուսաստանի նախագահն «աղտակեց» ՆԱՏՕ-ին, որը փորձել էր ռուսներին հեռացնել Բոսնիայի խնդրի կարգավորումից, առաջ անցավ իր երկրի ընդդիմադիր ուժերից, վերջ դրեց իր առողջական վիճակին վերաբերվող ասեկոսեներին»:

Իտալական «Ռեպուբլիկա» թերթի կարծիքով, «Ուղղափառ Ռուսաստանի համար նվաստացուցիչ կլիներ անօգնական կերպով դիտել սերբերի վրա ՆԱՏՕ-ի օդային գրոհները: Արեւմուտքը վստահ էր Մոսկվայի անգործությանը, այն բանին, թե նա չի կարողանա օգնել իր սերբ դաշնակցին: Այլանդյան խորհրդի վճիռը ուղղակի վիրավորանք էր: Ստեղծված դրությունում Բորիս Ելցինը չէր կարող «մյուս երեսը դեմ տալ», եւ նա հանդես եկավ Ռուսաստանի նախաձեռնությամբ: Ըստ որում, Ռուսաստանի նախագահը չվնասեց նաեւ Արեւմուտքի հետ Ռուսաստանի հարաբերություններին: Այնպես որ արեւմտյան մայրաքաղաքները դեմ է ոչ միայն դաշտաճաք հաստցնեն, այլեւ երախտագիտությամբ գնահատեն Բորիս Ելցինի իրատեսությունը»:

Բրատիսլավայի «Օմն» թերթի խոսքերով, «Սարաեւոյի ճակատամարտը շահեց Մոսկվան»: «Բոսնիայում իրադարձությունների զարգացման անակնկալ շրջադարձը հնարավոր դարձավ ռուսական դիվանագիտության ջանքերով, որի հուժկու հարձակումն ավարտվեց տպավորիչ հաղթանակով, ասվում է թերթի մեկնաբանության մեջ: Ռուսական միջնորդական առաքելությունը մի իսկական գրոսմայստերական քայլ էր:

ՀԱՄԱՌՈՏ

Ա. Կոզիրեւ. «Ռուսաստանը թույլ չի տա նոր «խաչակրաց արշավանքներ»

ՊՐԱՀԱ, 21 ՓԵՏՐՎԱՐ, ՄՆԱՐՔՈՒԱ: «Ամբողջ հարավսլավական հակամարտության գլխավոր վտանգներից մեկը նրա սասկացումն է ընդհատող մինչեւ դարասկզբի սցենարի կրկնվելն այս կամ այն կերպ», ասաց Ռուսաստանի Դաշնության արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւը Ռուսաստանի հիմնախնդիրներով զբաղվող չեխ լրագրողների ակումբի անդամների հետ զրուցելու ընթացքում: Հանդիպումն անցավ Պրահայի գիտության ու մշակույթի ռուսաստանյան կենտրոնում: Ռուսաստանին դարտադրում են մարտնչող կողմերի հետ մեծ տերության «հանձախորդային» հարաբերությունների սցենար ըստ կրոնական սկզբունքի: Եւ ես դա միանգամայն անընդունելի եմ համարում, որ մուսուլմանների բիկունքին կանգնած լինի մուսուլմանական աշխարհը, սերբերի բիկունքին ուղղափառ, իսկ խորվաթների բիկունքին կաթոլիկ»:

«20-րդ դարի վերջին մոլորակը կրոնական «խաչակրաց արշավանքներին» վերադարձնելն արդեն է, ընդգծեց Ռուսաստանի դիվանագիտության ղեկավարը: եւ Ռուսաստանը դա թույլ չի տա: Այս է մեծ տերությունների գործողությունների միասնության ու համագործակցության վրա մեր կողմից դրվող շեշտի իմաստը որեւէ հիմնախնդիր կարգավորելիս, այդ թվում եւ Բոսնիայի ճգնաժամի»: Չեխ լրագրողների հետ զրուցելիս Անդրեյ Կոզիրեւը նշեց, որ լավ կապեր ունի Բոսնիայի հարաբերությունների հետ, որը բանկցս հայտարարել է, որ «Ռուսաստանը դեմ է եռանդուն դեր խաղա Բոսնիայի հիմնախնդրի կարգավորման հարցում որպես մեծ տերություններից մեկը»: ■

Քրդական երկու հակադիր կազմակերպությունները հաշտվեցին

ԱՆԿԱՐԱ, 19 ՓԵՏՐՎԱՐ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Քրդստանի հայրենասիրական դաշինքը եւ Քրդստանի իսլամական շարժումը համաձայնագիր են ստորագրել Իրանի հյուսիսում այդ կազմակերպությունների սպառազեն կազմավորումների միջեւ մարտական գործողությունները դադարեցնելու մասին: Այդ մասին տրաբ օրը Թուրքիայի մայրաքաղաքում հայտարարեց ՔՀԴ-ի դաշտնական ներկայացուցիչ Սաֆին Դիզային: Սպառազեն բախումների հետեւանքով, հաղորդեց նա, 200-ից ավել մարդ է զոհվել: Քրդական երկու կազմակերպությունների միջեւ գինված դիմակայությունն սկսվել էր անցյալ տարվա դեկտեմբերին, այն հարցում եղած տարաձայնությունների դաշտնառով, թե նրանցից որն է գլխավորող դերը գրավում տարածաշրջանում: Քրդստանի իսլամական շարժումը սունիի կազմակերպություն է, որը սերտ կապեր է դաշտանում Իրանի եւ Սաուդյան Արաբիայի հետ: ■

Ալիեւը Մեծ Բրիտանիայում

Այսօր Մեծ Բրիտանիա կմեկնի Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը: Մինչ այդ, անցյալ տրաբ ընդունելով Ադրբեջանում Մեծ Բրիտանիայի դեսպան Թոմաս Յանգին, Ալիեւը հույս էր հայտնել, որ Մեծ Բրիտանիա կատարելիք այցի ծրագրով նախատեսվում են Ալիեւի անձնական հանդիպումներ վարչապետ Ջոն Մեյջորի, արտաքին գործերի դեսպարտաղար Դուգլաս Հեդի, առեւտրի դալատի նախագահ Մայքլ Հեզլթայնի, «Բրիտիշ փեթրոլիում» ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Դեյվիդ Սայմոնի, նախկին վարչապետ Մարգարեթ Թեչերի եւ նշանավոր այլ անձանց հետ: Ջոն Մեյջորի հրավերով Ալիեւի դաշտաոնական այցը տեղի կունենա փետրվարի 22-25-ը, ասաց նախագահի մամլո ծառայության ղեկավար Թոֆիկ Աբասովը: Նախատեսվում է այցի ընթացքում ստորագրել բարեկամության եւ համագործակցության դաշտանագիր: Բացի դրանից, կստորագրվեն մի քանի դաշտաոնական փաստաթղթեր: Ալիեւի այցը Լոնդոն հաջորդում է նախագահ Տեր-Պետրոսյանի այցին եւ ըստ երեւույթին նրա նկատմամբ ցուցաբերվելու է նույն հյուրընկալությունը, բացի բազմահի Եղիսաբեթ Երկրորդի կողմից ընդունվելը, քանի որ վերջինս դարձյալ այդ դահին Մեծ Բրիտանիայում չի լինելու: ■

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿՈՆԴՈՒԽՏ» ամանդապաշտ ժողովրդավարական կուսակցությունը հրավիրում է հանրահավաքի օպերայի հրապարակում փետրվարի 23-ին ժ. 13-ին քննարկելու ՀՀ ներքաղաքական իրավիճակը եւ կուսակցության ու ժողովրդի կոնկրետ անելիքները:

Կազմկոմիտե

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատունը աշխատանքի է հրավիրում ավտոմեքանիկների, որոնք տիրապետում են անգլերեն լեզվին (գրելկարդալ):

Ցանկացողները դիմումները պետք է ներկայացնեն մինչեւ փետրվարի 25-ը, դեսպանատան ընդունարանում, 1-ին հարկ:

ԽՈՍԵԿԱԲ

Ալիեւի զավակները թուրքահպատակ

Ինչպես տեղեկացնում է «Հյուրրիյեթ» թերթն իր փետրվարի 10-ի համարում, ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի որդին՝ Իլհամ Ալիեւն իր տիկնոջ՝ Միհրիբան Ալիեւայի հետ դիմել է թուրքական իշխանություններին՝ Թուրքիայի քաղաքացիություն ստանալու խնդրանքով: Պատրաստվում են Թուրքիայի քաղաքացիություն ընդունել նաեւ Ալիեւի դուստրը՝ Սեւիլ Ալիեւան ու փեսան՝ Մահմուդ Ալիեւը: Կառավարության մամլո ծառայությունը հաստատել է այս լուրերը եւ հավաստիացրել, որ Ալիեւի ժառանգների խնդրանքը կբավարարվի: Իլհամ Ալիեւը Թուրքիայում մի քանի ֆիրմաների տեր է եւ վերջերս նշանակվել է Ադրբեջանի արտակարգ եւ լիազոր դեսպան Մեծ Բրիտանիայում:

Հայտնի լրագրողը անջատակա՞ն

Հայտնի լրագրող եւ քաղաքական մեկնաբան Մեհմեդ Ալի Բիրանդը կրկին Թուրքիայի զինվորական իշխանությունների հարձակման թիրախ է դարձել: Գլխավոր շտաբի «բազեները» վերջինիս մեղադրում են «անջատականության օգտին քարոզչություն» իրականացնելու եւ զինված ուժերին ենթադրող արտահայտություններով բանակի բարոյական ոգուն հարված հասցնելու մեջ: Նման մեղադրանքների համար ադիր է եղել 1992 թ. նոյեմբերի 16-ին «32-րդ օր» հեռուստահաղորդման ժամանակ Քրդստանի բանվորական կուսակցության ղեկավար Ա. Օջալանի հետ անցկացրած հարցազրույցը: Մ. Բիրանդին տպառնում է 6 տարվա ազատազրկում:

ԲԱԼԵՆՑ
ԻՆՎԵՍՏ

Բաբկիրյան «Նավթ եւ դրա վերաբակման արդյունքները» մասնագիտացված ամրանքա-հումքային բորսայի (ԲՄԱԶԲ) դաշտոնական ներկայացուցիչ Բալենց Ինվեստ ֆիրման, առաջարկում է ԲՄԱԶԲ-ի ժամկետային պայմանագրերը՝ Բաբկիրյան բենզին-1, Բաբկիրյան դիզել Բաբկիրյան մազութ:

Փորձեք ինքներդ տնօրինել Ձեր բախտը

Հայաստան, Երեւան, Չարենցի 1, 5-րդ հարկ
Բալենց Ինվեստ
Հեռ.57-53-20

AZNAVOUR
Co. LTD
առաջարկում է
հրապուրիչ ճանապարհորդություն եգիպտոսի պատմական եւ տեսարժան վայրերով, այցելություններ եգիպտական բուրգեր, կաբվի ու օձանելիքի գործարան եւ այլ հետաքրքիր էքսկուրսիաներ:
Ձեզ հնարավորություն կընձեռվի օթեւանելու Կահիրե եւ Ալեքսանդրիա քաղաքների չորսաստղանի հյուրանոցների երկտեղանի համարներում:
Ճանապարհորդությունը երբուղիղ է.
Երեւան-Դնեպրոպետրովսկ-Կահիրե-Ալեքսանդրիա-Կահիրե-Դնեպրոպետրովսկ-Երեւան
Շաբաթ, տեղերը սահմանափակ են:
Ընկերությունն առաջարկում է նաեւ ճանապարհորդություններ եվրոպական եւ ասիական այլ երկրներ:
Տեղեկությունների համար զանգահարել՝ 56.82.58
Հասցեն՝ Սայաթ-Նովա 11, 1 մուտք
A STYLE

ՀՀ կառավարության «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան 23 Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Տպաքանակ 15 000. Պատվեր 1700 Ստորագրված է տպագրության՝ 21. 02. 1994 Գինը՝ 100 տոմսի

digitised by A.R.A.R.@